



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



707

708

709

710

82

9-75



«Պատմություն» շաբաթաթերթի Տիֆլիզի Գրքատարարություն

Կոն-կ-թ Գրք. Գրքատարարություն

1901 թ. 21 հոկտեմբեր — Ի. ՏՈՒՐԳՆԱՆԵՑ

891.71

կար

ԱՐՁԱԿ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Թ. Ա. Ր. Գ. Մ. Ա. Ն. Ե. Ց.

ԱԼԷԲՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՄՈՍԿՈՒՍ.

Տ. Պ. Ա. Ր. Ա. Ն. Բ. Ա. Ր. Թ. ՈՒ. Դ. Ա. Ր. Ե. Ա. Ն. Բ.

1895

144 - 42

Дозволено цензурою. С.-Петербургъ, 30 Ноября, 1895 г.

---

7791. 17  
8

Типографія Х. Бархударянъ, Москва, Мясницкая, д. Ермаковыхъ.

---

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ,

(ՏԻՒՅՈՒՄՈՐԵՆԻԱ ՅՆՑ ՍՐՈՅՆ.)

144



Յու լիս ամսուայ վերջին օրն է:  
 Զորս բոլոր հազար վերստա-  
 չափ տարածվում է հայրենի  
 երկիրը — Ռուսաստանը:

Հարթ-հաւասար կապու-  
 տակը պատել է ամբողջ երկինքը. միայն  
 մէկ հատիկ ամպի կտոր է երևում երկրն-  
 քում — նա էլ, չըզխտես, լողում է, թէ  
 հալվում: Քամի չկայ. շոգ օր է. . .

Արտուտները դիչ կրգում են, մեծաքար-  
 ճիկ աղաւնիները զունդունում, ծիծեռնակ-  
 ները լուռ ճախրում են, ձիերն օրոճում  
 ու խրխինջ բարձրացնում. շները չեն հա-  
 ջում, այլ կանգնած՝ խոնարհ կերպով պո-  
 չիրն են խաղացնում:

Համ ծուխի, Համ խոտի Հոտ է դալիս,  
զգում ես մի քիչ էլ կպրածիւթի Հոտ,  
քիչ էլ — կաշուի Հոտ: Կանեփի արտերն  
արդէն ոյժ առած՝ ծանր, բայց դուրեկան  
Հոտ են արձակում:

Ահա մի խորայտակ, բայց փոքր ինչ  
զառիփայր ձոր: Զորի երկու կողմերին շա-  
բուած են մի քանի շարք մեծ-մեծ դլխնե-  
րով, դէպի ցած շերտուած հաւամրդի  
թփեր: Զորի միջով վազում է գետակը,  
որի յատակին մանրիկ քարերը փայլուն ու  
ճիճփան ջրերի միջով, ասես, դողդողալիս  
լինեն: Հեռուն, ուր երկինքն ու երկիրը միա-  
նում են իրար հետ, կապոյտ գծի նման  
ձգվում է մեծ գետը:

Զորի երկայնութեամբ աչքի են ընկ-  
նում մի կողմից — փոքրիկ ու խտակ ամ-  
բարներ, որոնք նման են մի տեսակ վան-  
դակների՝ պինդ փակուած դռներով, միւս  
կողմից — եղևնափայտից շինած հինգ-վեց  
հատ խրճիթներ՝ տախտակամած կտուրնե-  
րով: Ամեն մի կտրան դլխին ցցում է  
երկայն ձող, ձողի ծայրին — սարեակի բուն:  
Կուսամուտների անհարթ ապակիներն ար-  
տացուում են ծիածանի գոյներ: Փեղկերի

վրայ նկարուած են ծաղկեփնջերով սա-  
փորներ: Ամեն մի խրճիթի առաջ կարգին  
դրուած է մի-մի կոկ նստարան: Կատուները  
թափանցիկ ականջները սրած՝ կծկուել են  
կոյտերի վրայ: Խրճիթների բարձր շէմքերի  
ետեւից հովին են տալիս կիսամութ նախա-  
սենեակները:

Տակս չուլ (ΠΟΠΟΝΑ) փռած՝ թեք եւ  
ընկել ձորի հէնց եղերքին: Չորս բոլորս դի-  
դուած են խոտակոյտեր — նոր հնձած և  
թուլացնելու չափ անուշահոտ խոտակոյ-  
տեր: Խելացի տէրերը խոտը փռել են խրճ-  
իթների առաջ, որ արեւի տակ մի քիչ  
չորանայ: Յետոյ կառնեն, կաճեն խոտա-  
նոցը: Այ, այն ժամանակ քնի՛ր հիմ քնի՛ր  
փափուկ խոտի վրայ, ինչքան սիրտդ կուզի:

Խոտակոյտերի միջից աչքի են ընկնում  
մանկական փոքրիկ, գանդրահեր գլուխներ:  
Քաբուլաւոր հաւերը միջատներ ու մթեղ-  
ներ են որոնում խոտի մէջ: Սպիտակա-  
դունչ քոթոթը թաւաղլոր է գալիս խր-  
ճրճուած խոտածեղերում:

Գիւղի շիկադանդուր ջահիլները մաքուր  
ու ցած դօտկած շապիկները հագին, ծա-  
լովի ճիւղերով, ծանր կօշիկները օտներին,

կուրծքները դէմ գցած չըլծուած սայլա-  
կին՝ իրար հետ ուրախ-ուրախ ասում խօ-  
սում են— լիռահաշի են տալիս:

Հուսամուտից նայում է ջահիլ, կլորա-  
դէմ գեղջկուհին. նայում է և ծիծաղում,  
չես իմանում, ջահիլների խօսք ու զրոյցի  
վրայ, թէ խոտակոյտերում վխտացող մա-  
նուկների վրայ:

Մի ուրիշ մատաղ գեղջկուհի թայ-  
թայց դոյլը բռնած ուժեղ ձեռքում, ջրհո-  
րից ջուր է տանում... Թոկի ծայրից կախ  
ընկած դոյլը դողգողում ու օրօրվում է՝  
կրքեմն-երբեմն վայր դլորելով երկայն, հրա-  
փայլ ջրի կաթիլներ:

Իմ առաջ կանգնած է պառաւ տան-  
ախկինը՝ նոր, նախշուն բաձկոնակը հա-  
զին, նոր հողաթափները ստներին:

Խոշոր և փքուն յուլունքներն երեք  
շարք պատել են նրա թխամորթ և լղար  
վիզը: Ալեգարդ դլխին կապած ունի կար-  
միր պուտերով գեղին թաշկինակ, որ ցած  
է թողել մինչև մթագունած աչքերը:

Բայց ի՛նչ քաղցր ու սիրալիւր ժրպ-  
տում են այդ պառաւական աչքերը. ժրպ-  
տում է նրա ամբողջ, խորշամներով ծած-

կուած երեսը: Այլ դիտէ, եօթանասունին  
արդէն մօտ է պառաւր... բայց հիմա էլ  
դեռ երեւում է, որ ժամանակին զեղեցկու-  
հի է եղել:

Աջ ձեռքին, արեւառ ու լայն-լայն չռած  
մասներով նա բռնած ունի կաթի կձուձ՝  
լիքը սառն, դեռ սերը չքաշած կաթով,  
որ հէնց նոր է հանել մառանից: Կձուձը  
դրսից ծածկուած է ցօղի փայլուն կաթիլ-  
ներով, որոնք, ասես, յուլունքներ լինեն:  
Իսկ ձախ ձեռքին, ափի մէջ դրած՝ պա-  
ռաւր մօտեցնում է ինձ թաժայ, տաք-  
տաք հացի մի մեծ կտոր: — «Սնուշ արան,  
քեզ հալան, ճամբորդ հիւր»:

Յանկարծ կանչում է աքաղաղը և ա-  
րագ թափահարում թևերը: Կարծես, ա-  
քաղաղի կանչին պատասխանելով, առանց  
շտապելու՝ բռնաչում է դոմբում փակուած  
հորթուկը:


— Համա դարի է հա՛, — լսվում է կա-  
ռապանի ձայնը:

Օ՛, հայրենի ազատ դիւղ, դիւղական  
հանդի՛ ստ, դիւղական բարի՛ք ու առատու-  
թի՛ւն: Օ՛, խաղաղ ու բարեբեր կեանք:

Եւ մտածում եմ — ի՞նչերիս է պէտք

մեզ այստեղ և՛ այն խաչը, որ այնպէս փա-  
փաղում ենք կանգնած տեսնել Ստամբո-  
լում, Սյա-Սօֆիայի գմբէթի վրայ, և՛ այն  
ամենն, ինչին որ այնպէս հետամուտ ենք  
մենք—քաղաքի մարդիկս:

Փետրուար, 1878.



Խ Օ Ս Ը Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն.

«Ո՛չ Իւնգֆրաուին, ո՛չ էլ  
Ֆինստերաարհորնին դեռ  
մարդու ոտք չէր դիպել»:



Սհա՛ն Սղապեանս լիռների դադաթ-  
ները. . . Սհա՛ն սեպեղը քա-  
րափների մի ամբողջ շղ-  
թայ. . . Սհա՛ն սարերի հէ՛նց  
սիրար:

Վերեր, սարերից բարձր փռուած է բայ-  
կանաչ պայծառ ու համբի երկնակամարը:  
Սաստիկ, դժնդակ սառնամանիք է: Կարծ-  
րացած ձիւնը շողում, պէ՛ծ-պէ՛ծին է տա-  
լիս: Ձիւնի տակից տեղ-տեղ դուրս են  
ցցուել սառցապատ, հողմալիզ ժայռերի  
դժնաստեպիլ դադաթները:

Հորիզոնի երկու կողմերից, որպէս երկու  
հսկայ, գաղաթները վեր համբարձած՝ նա-  
յոււմ են Իւնդֆրաուն և Ֆինստերաար-  
հօրներ:

Եւ Իւնդֆրաուն ձայն է տալիս իւր հա-  
րեանին. — Ի՞նչ նոր բան կայ. դու աւելի  
լաւ ես տեսնում. ի՞նչ կայ այնտեղ, ներքեր:

Սնցնում են մի քանի հազար տարիներ  
— մի րոպէ:

Եւ Ֆինստերաարհօրներ դղրդալով պա-  
տասխանում է. — Սմայերն ամբողջովին  
ծածկել են երկրի երեսը. . . Սպասիր:

Սնցնում են էլի հազարամեակներ — մի  
րոպէ:

— Իսկ այժմ, — հարցնում է Իւնդֆրա-  
ուն:

— Այժմ երևում է: Այնտեղ, ներքեն  
էլի նոյնն է, ինչ որ առաջ էր: Մանր-  
մժուռ, գոյն-գոյն բաներ են երևում աչ-  
քիս: Ջրերը կապոյտին են տալիս, անտառ-  
ները սևին. քարաշեղջերը դորշադունում  
են: Իսկ նրանց մօտերքին դեռ էլի խրժ-  
վրժում են նոյն մժուռները, հօ՛ղիտեա,  
այն երկոտանիները, որոնք դեռ ոչ մի ան-  
գամ չըկարողացան պղծել ո՛չ քեզ, ո՛չ ինձ:

—Մարդի՞կ:

—Այո՛. մարդիկ:

Անցնում է հազար տարի—մի րոպէ:

—Իսկ այժմ, — հարցնում է Իւնդֆրաոււն:

—Կարծես, մտղուկները պակասեցին, քիչ են երևում, — թնդում է Փինատերաարհորներ: — Ներքեն աւելի բացուեց ու պարզուեց: Ջրերը սեղմուեցին, քչացան. անտառները նուրացան:

Անցնում է էլի հազար տարի—մի րոպէ:

—Ի՞նչ ես տեսնում, — ձայն է տալիս Իւնդֆրաոււն:

—Մեր առաջ, մեր մօտերքը, ասես, մաքրուեց, — պատասխանում է Փինատերաարհորներ, — իսկ այնտեղ, հեռուն, հովիտների մէջ դեռ էլի աչքի են ընկնում դանաղան բծեր և մի բան շարժողութեան մէջ է:

—Նր՛, իսկ այժմ, — հարցնում է Իւնդֆրաոււն, երբ անցնում է միւս հազար տարին—մի րոպէն:

—Այժմ լաւ է, — պատասխանում է Փինատերաարհորներ: — Ամեն տեղ մաքրուել, շնորհքի է ընկել: Ուր էլ նայում ես—

սպիտակին է տալիս... Ամենուրեք պատել  
է մեր ձիւնը — մեր հարթ-հաւասար ձիւնը  
և սառոյցը: Ինչ կայ ու չկայ՝ սառել է:  
Սյժմ լաւ է, խաղաղ ու հանդիստ է:  
— Լաւ — արտասանեց Իւնդֆրատն: —  
Սակայն բաւական է, ինչքան զրոյց արինք,  
ճերմակ. ժամանակ է քնելու:  
— Ժամանակ է:  
Քնած են վիթխարի լեռները: Քնած է  
և՛ կանաչ ու լուսափայլ երկինքը յաւէտ  
լռած երկրի վրայ:

Փետրուար, 1878.



Պ Ե Ռ Ե Ի.

**Մ**են-մենակ անցնում էի լայնար-  
ձակ դաշտի միջով:  
Յանկարձ ինձ այնպէս թւաց,  
թէ հակիցս թիթե ու յուշիկ  
քայլերի ձայն եմ լսում: Մէկը հետեւում  
էր ինձ:

Ես նայեցի—և տեսայ մի փոքրիկ, մէջքը  
կոր պառաւ՝ ոտից . դուրս փաթաթուած  
աղքատիկ ցնցոտիներում: Յնցոտիների մի-  
ջից պառաւի միայն երեան էր երևում—  
դեղին, կնճռոտ, սրաքիթ ու անասամ ե-  
րկոր:

Ես մտեցայ նրան... Նա կանգ առաւ:  
—Ո՞վ ես դու. ի՞նչ ես ուզում. մու-  
րացկան ես. ողորմութեան ես սպասում:

Պատաւը պատասխան չըտուեց: Ես  
զլուխս մի քիչ առաջ ծռեցի և տեսայ,  
որ նրա երկու աչքն էլ սքողուած էին  
կիսաթափանցիկ, սպիտակաւուն թաղան-  
թով կամ փառով, ինչպէս որ մի քանի  
թռչունների աչքերն են լինում, որոնց այդ  
նուրբ մաշկը պաշտպանում է արեւի խիստ  
փառ ճառագայթներէն:

Բայց պատաւի աչքերի այդ թաղանթը  
չէր շարժվում և բիբերն էլ չէին երևում...  
որից եզրակացրի, որ նա կոյր է:

— Աւզում ես ողորմութիւն տամ, —  
կրկնեցի ես իմ հարցմունքը: — Ի՞նչ ես  
եսելիցս ընկել:

Սակայն պատաւն առաջուայ պէս լուռ  
էր, և միայն մի քիչ կուչ եկաւ:

Ես երեսս շուռ տուի նրանից և գնացի  
իմ ճանապարհով:

Եւ ահա իմ ետելից դարձեալ լսում  
եմ նոյն թեթեւ, նոյն համաչափ, ասեա,  
զոզունի կերպով ինձ մտեցող քայլերի  
ձայնը:

— Էլի այն կիներն է, — անցաւ մտքովս. —  
ի՞նչ է կպել նա ինձանից: — Բայց իսկոյն  
մաքումս աւելացրի — երևի, կուրութեան

պատճառով ճանապարհը կորցրել է և  
այժմ քայլերիս ճայնին սկանջ դրած՝ դա-  
լիս է իմ ետևից, որ ինձ հետ միասին մի  
մարդաբնակ տեղ դուրս գայ: Այո՛, այո՛,  
հէնց այդպէս է, որ կայ:

Բայց հետզհետէ մի տարօրինակ ան-  
հանդատութիւն պաշարում էր միտքս: Ինձ  
թւում էր, թէ այդ պառաւր ոչ միայն  
ինձ հետևում է, այլ նա ինձ ճանապարհ  
է ցոյց տալիս, նա ինձ հրում է մերթ աջ,  
մերթ ձախ, և ես սկամայ հնազանդում  
եմ նրան:

Սակայն ես շարունակում եմ ճանա-  
պարհս... Բայց ահա իմ առաջ, հէնց ճա-  
նապարհի վրայ մի բան սեին է տալիս և  
հետզհետէ լայնանում է... Աչքովս է ընկ-  
նում մի փոս... «Գերեզման» — կայծակի  
արագութեամբ անցնում է մտքովս: — Ահա՛  
թէ ուր է մղում նա ինձ:

Ես խեղոյն շուռ եմ գալիս: Պառաւն  
էլի կանգնած է իմ առաջ... բայց նա հի-  
մայ տեսնում է: Նա նայում է վրաս իւր  
մեծ-մեծ, կատաղի, շարագուշակ աչքե-  
րով... նայում է դիշաափի թռչնի հայեաց-  
քով... Ես մի քանի քայլ եմ անում դէպի

ԲՏ-15 ԷԷ

նա, աչքերս մտայնում եմ նրա երեսին,  
աչքերին... Գարձեալ նոյն մթազունս  
թաղանթը, նոյն կոյր ու բուժ գէմքի դը-  
ճազրութիւնը...

«Ախ, մտածում եմ ես... այս պատան  
—իմ ճակատագիրն է: Այն ճակատագիրը,  
որից մարդս ազատուել չի կարող»:

«Ազատուել չի կարող, ազատուել չի  
կարող:— Ինչ յիմարութիւն... Պէտք է  
փորձել»: Եւ ինձ նետում եմ մի ուրիշ  
կողմը, ճանապարհս փոխում եմ:

Ես գնում եմ շտապ-շտապ... բայց իմ  
կտր, մտիկ, շնա մտիկ ինձ լսում եմ  
էլի նոյն առաջուպ թեթե քայլերի շըր-  
շիւնը... Իսկ իմ առաջ գարձեալ սեին է  
տալիս նոյն փոսը:

Ես էլի ճանապարհս ծռում եմ մի այլ  
կողմը... Եւ էլի նոյն շրշիւնը—իմ կտր,  
նոյն ահեղ բիծը—իմ առաջ:

Եւ փոխուստ տուած նապաստակի պէս,  
ուր էլ որ ընկնում եմ... լսում եմ նոյնը,  
տեսնում եմ նոյնը:

— Սպասի՛ր, մտածում եմ ես: — Արի,  
խաբեմ նրան, ո՛չ մի կողմը չըզնամ—ե  
մի ակնթարթում նստում եմ գեանին:

Պատաւն երկու քայլ դէնը՝ կանգնած  
է իմ ետեր: Ել ձայն չի դալիս, բայց ըզ-  
գում կմ, որ նա այստեղ է:

Եւ ահա մէկ էլ տեսնում կմ, այն բի-  
ծը, որ հեռուից սեին էր տալիս, լողում,  
սողում է դէպի ինձ:

Տէր Սատուած: Ես կա կմ նայում...

Պատաւի աչքերն ուղղակի յառած են  
իմ վրայ—և հեղնական ծիծաղը ծամա-  
ծռել է նրա անասամբ բերանը. . .

—Չե՛ս սղասուիլ:

Փետրուար. 1878.




**Ս**ենեակում միայն երկուսս ենք  
 — իմ շունը և ես... Գուր-  
 սը մոնչում է սոսկալի փո-  
 թորիկը:

Շունը նստած է իմ առաջ և ուղղակի  
 նայում է աչքերիս:

Ես էլ նրա աչքերին եմ նայում:

Նա ինձ կարծես մի բան է ուզում ա-  
 սել: Նա համր է, նա անլեզու է, նա ինքն  
 իրան չի հասկանում, բայց ես հասկանում  
 եմ նրան:

Ես հասկանում եմ, որ այդ վայրկեանին  
 թէ՛ նրա և թէ՛ իմ մէջ ապրում է մի և  
 նույն զգացմունքը, որ մեր երկուսիս մէջ

ոչ մի զանազանութիւն չկայ: Մենք համա-  
նման արարածներ ենք: Ամեն մէկիս մէջ  
վառվում ու լոյս է տալիս միևնոյն զոդ-  
զոջիւն կրակը:

Վրայ կըհասնի մահը, թափ կըտայ իւր  
սառն ու լայն թեր. . .

— Եւ վե՛րջ:


Ո՞վ կիմանայ յետոյ, թէ մեզնից որի  
մէջ ի՞նչ տեսակ կրակ էր վառվում:

Ո՞չ, սա մարդու և կենդանու հայեացք-  
ների փոխանակութիւն չէ. . .


Սրանք երկու զոյգ միանման աչքեր են՝  
յառած միմեանց վրայ:

Եւ այդ զոյգերից ամեն մէկում — թէ  
կենդանու և թէ մարդու աչքերում — մի  
և նոյն կեանքն է, որ այնպէս վախճու-  
լով՝ յարվում է միւսին:

Փետրուար, 1878.



Ա Մ Ո Յ Ե Ա Ն .



մի ընկեր - ախոյեանն ունէի :  
 Բայց նա իմ ախոյեանն էր  
 ոչ թէ պարապմունքնե-  
 րիս, պաշտօնիս կամ սի-  
 րոյ մէջ — ոչ : Մենք տար-  
 րեր կարծիքների ու հայեացքների տէր  
 մարդիկ էինք և ամեն անգամ, երբ հան-  
 դիպում էինք իրար, մեր վիճաբանութիւն-  
 ներին վերջ չէր լինում :

Վիճում էինք ամեն բանի մասին —  
 զեղարուեստի, կրօնի, դիտութեան, երկրա-  
 յինն ու հանդերձեայ, մանաւանդ, հանդեր-  
 ձեայ կեանքի մասին :

Ախոյեանս մի ողեզմայլ և հաւասարող  
մարդ էր: Մի անգամ նա ինձ ասաց. «Ինչ  
ամեն բանի վրայ ծիծաղում ես. բայց եթէ  
ես քեզանից առաջ մեռնեմ, կըզամ, կը  
յայտնուեմ քեզ այն աշխարհից... Տես-  
նենք, դու այն ժամանակ էլ կըծիծաղես»:

Եւ, իրաւ, նա ինձանից առաջ մեռաւ.  
մեռաւ երիտասարդ հասակում: Սակայն  
անցան տարիներ և ես մոռացայ թէ՛ նրա  
խոստումը, թէ՛ նրա սպառնալիքը:

Մի գիշեր անկողնումս պարկած՝ չէի  
կարողանում քնել. իսկապէս, չէի էլ ու-  
ղում քնել:

Սենեակումս մի տեսակ լուս ու մութ  
էր: Ես սկսեցի անթարթ նայել դէպի ա-  
լեխառն կիսախաւարը:


Եւ յանկարծ ինձ թւաց, թէ երկու լու-  
սամուտների մէջ տեղում կանգնած է իմ  
ախոյեանը և լուս ու տխուր շարժում է  
գլուխը — վերեւից ներքեւ:

Ես չըվախեցայ. մինչև անգամ չըզար-  
մացայ... Միայն տեղիցս մի քիչ վեր բարձ-  
րանալով և արմունկիս յենուելով՝ սկսեցի  
աւելի խոր նայել անակնկալ յայտնուած  
հիւրիս վրայ:


Նա շարունակում էր պուխն օրօրեի:  
— Հը՛, ի՞նչ է — վերջապէս ձայն հանեցի  
կա: — Յաղթանակ թէ ցաւակցութի՞ւն. նա-  
խապգուշացնելո՞ւ թէ նախատելո՞ւ կա յայտ-  
նուել: Թէ՞ եկել ես հասկացնելու ինձ, որ  
դու անիրաւացի էիր, կամ երկուսս էլ անի-  
րաւացի էինք: Ի՞նչ ես զգում դու այժմ —  
դժոխային տանջանք թէ եղեմական երջան-  
կութի՞ւն: — Խօսի՛ր, ասա՛ դոնէ մի խօսք:  
Բայց իմ ախոյեանը ձայն-ճապտուն չըհա-  
նեց: Նա միայն առաջուայ պէս տխուր ու  
հնազանդ շարժում էր գլուխը — վերեւից  
ներքև:

Ես ծիծաղեցի. . . նա չքաղաւ:

Փետրուար, 1878



Մ Ո Ւ Ր Ա Ց Կ Ա Ն .



անցնում էի փողոցով. . .  
Ինձ կանգնեցրեց մի ծեր,  
հալից ընկած մուրայ-  
կան:

Աչքերն արտասուալից,  
ուռած ու կարմրած, շրթունքները կապ-  
տած, հաղին լաթեր, մարմնի վրայ ան-  
մաքուր վերքեր... Օ, ինչ այլանդակ կեր-  
պով մաշել, կերել էր այդ անբախտ արա-  
րածին աղքատաթիւնը:

Նա ինձ պարզել էր իւր կարմրած, ու-  
ռած ու կեղտերով ծածկուած ձեռքը. . .

Նա հառաչում էր, նա խեղդուած ձայ-  
նով ողորմութիւն էր աղերսում:

Գրպաններս սկսեցի տակնու վրայ անել...  
Բան չըզտայ—նչ փող, նչ ժամացոյց, նչ  
էլ նոյն իսկ թաշկինակ... Հետս ոչինչ չէի  
առել...

Իսկ մաւրացիները շարունակ սպասում  
էր... և նրա կարկառած ձեռքը թոյլ կեր-  
պով երերվում ու ցնցվում էր:


Ինքս ինձ կորցրած, շփոթուած՝ ևս ա-  
մուր սեղմեցի այդ դողդոջիւն, այդ կեղտե-  
րով ծածկուած ձեռքը... «Թողութիւն  
արա՛, եղբայր, ես ոչինչ չունեմ»:

Մաւրացիանն իւր կարմրատակած աչ-  
քերն յառեց վրաս: Նրա կապտած շըր-  
թունքները քմծիծաղ տուին և նա էլ  
իւր կողմից պինդ սեղմեց իմ սառած մատ-  
ները:

«Է՛հ, ի՛նչ արած, եղբայր,— ծամծմեց  
նա— դրա համար էլ շնորհակալ եմ. այդ  
էլ մի ողորմութիւն է, եղբայր»:

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն  
ստացայ իմ եղբօրից:

Փետրուար, 1878 թ.



„ԳՈՒ ԿԸԼՍԵՍ ԳԱՏԵՍՏԵՆՈՐ ՅԻՄԱՐԻ“...

Պուշկին.



Գու կըլսես դատաստանը յիմարի»... Գու միշտ ճշմարտութիւն էիր ասում, ո՛վ մեր մեծ երգիչ, նոյնն ասացիր և այս անգամ:

«Դատաստանը յիմարի և ծաղրանքը ամբոխի»... Ո՞վ չէ փորձել և՛ մէկը, և՛ միւսը:

Սյդ ամենին կարելի է համբերել — և պէտք է համբերել. իսկ ով կարող է, ով ոյժ ունի — թո՛ղ արհամարհէ:

Բայց կան հարուածներ, որոնք խիստ վերաւորիչ կերպով ուղղակի հէնց սրտին են դիպչում... Ահա այս մարդը ձեռքից

եկածը չի խնայել. ինչ որ կարող էր ա-  
նել, արեւ է, աշխատել է սրտեռանդ, սի-  
րով, ազնուութեամբ. . . Եւ ազնիւ հոգիք  
զգուանքով շուռ են դալիս նրանից. ազ-  
նիւ երեսներ բարկութիւնից կրակ են կրա-  
րում՝ նրա անունը լսելիս: «Տեռացի՛ր,  
կորի՛ր» — աղաղակելով ասում են նրան  
ազնիւ, մատաղ ձայներ: — «Ո՛չ քեզ ենք  
ուզում, ո՛չ էլ քո վաստակը: Ի՞նչ պըր-  
ծում ես մեր օթեանը: Ի՞նչ մեզ չես ծա-  
նաչում և չես հասկանում. . . Ի՞նչ մեր  
թշնամին ես»:

Ի՞նչ անի այն ժամանակ այդ մարդը:

Նա պէտք է շարունակէ աշխատել և  
բնաւ չըփորձէ իրան արդարացնելու. մին-  
չև անգամ չըպէտք է սպասէ աւելի ար-  
դարացի գնահատութիւն:

Մի ժամանակ երկրագործներն անիծում  
էին այն ճանապարհորդին, որ գետնախնձոր  
էր բերել նրանց և ուզում էր գետնա-  
խնձորը փոխել հացի հետ — խեղձ մարդու  
այդ հանապազօրեայ կերակրի հետ. . . Նրանք  
դէպի իրանց պարզած ձեռքից դուրս էին  
գջլում այդ թանկագին պարզէր, ցիխն  
էին դցում և ոտներով կխձորում:

Այժմ նրանք կերակրվում են այդ պար-  
զեով — և իրանց բարերարի անուանն էլ  
չեն իմանում:

Է՛հ, ի՛նչ արած: Նրանց ի՞նչին է պէտք  
նրա անունը: Նա առանց անունի էլ փր-  
կում է նրանց քաղցածութիւնից:

Աշխատենք միայն, որ մեր տուածն էլ,  
յիրաւի, օգտակար կերակուր լինի:

Այո՛, դժուար է անիրաւացի նախատիւնքն  
այն մարդկանց շրթունքներում, որոնց սի-  
րում ես... բայց այդ էլ կարելի է տանել...

«Թակի՛ր ինձ, միայն ականջ դիր խօս-  
քիս» — ասում էր աթենացոյ զօրավարը  
սպարտացոյ զօրավարին:

«Թակի՛ր ինձ, միայն առողջ ու կուշտ  
եղիր» — պէտք է ասենք մենք:

Փետրուար, 1878 թ.



Պ Ո Հ Մ Ե Ր Պ.



Մայրաքաղաքի փողոցով արագա-  
 քայլ և թաշկոտալով անց-  
 նում է մի մարդ՝ դեռ և ս-  
 երխասարդ: Նրա շարժ-  
 մունքներն աշխոյժ ու ուրախ  
 են. աչքերը շողշողում են. շրթունքներին  
 խաղում է ժպիտ. ինքնազոհ երեսը դու-  
 րեկան կերպով կարմրին է տալիս... Նա,  
 տես, մարմնացած բաւականութիւն ու  
 ուրախութիւն լինի:

Ի՞նչ է պատահել նրան: Սրդեօք ժա-  
 ուանդութիւն է ստացել, աստիճանն են  
 բարձրացրել, թէ՛ ժամադիր եղած՝ շտա-  
 պում է իւր սիրոյ առարկայի հետ տես-

հուելու: Թէ՞ հէնց միայն կուշտ փորով  
հասածաշել է և լիառատ ոյժի, առողջու-  
թեան զգացմունքն է, որ այդպէս խաղում  
ու եռում է նրա մարմնի բոլոր մասերում:  
Կամ չըլինի՞ թէ նրա վզից կախել են քո  
գեղեցիկ, ութանկիւնի խաչը, ո՛վ լեհացոյ  
Ստանիսլաւ արքայ:

Ո՛չ: Նա մի զրպարտութիւն է հնարել  
իւր ծանօթի մասին. այդ զրպարտութիւնը  
մեծ եռանդով և զգուշութեամբ տարա-  
ծել է դէս ու դէն. նոյնը նա լսել է իւր  
մի ուրիշ ծանօթի բերանից և ինքն էլ  
հաւատացել իւր հնարած զըր-  
պարտութեան:

Օ, որքան զոհ, և մինչև անդամ որքան  
բարի է այդ բոպէին այդ պատուական և  
շնա բան խոստացող երխատասարդը:

Փետրուար, 1878 թ.





**Եթէ** դուք ուզում էք ձեր հա-  
կառաւորացի հախիցը դալ  
և մինչև անդամ վնասել  
նրան, — ասում էր ինձ մի  
ծեր, աղուէս մարդ, —  
հապա յանդիմանեցէք նրան հէնց այն պա-  
կասութեան կամ արատի համար, որ դուք  
ձեր մէջն էք զգում: — Ցոյց տուէք զժողո-  
հութիւն... և յանդիմանեցէք:

Ս.ա.աջինը — այդ բանն ուրիշներին կըստի-  
պէ կարծել, որ դուք այդ արատի տէրը չէք:

Երկրորդը — ձեր զժողոհութիւնը կարող  
է մինչև անդամ անկեղծ լինել... Իսկ  
կարող էք օգտուել սեփական խղճի խայ-  
թոյներից:

Եթէ դուք, օրինակ, բենեգատ էք, Հապա նախատեցէք ձեր Հակառակորդին, որ նա Համոզմունք չունի:

Եթէ դուք ինքնիրդ Հոգով լաքէյ էք, Հապա յանդիմանելով ասացէք նրան, որ լաքէյը նա՛ է. . . լաքէյ քաղաքակրթութեան, լաքէյ Եւրոպայի, սօցիալականութեան. . .

—Կարելի է մինչև անգամ ասել՝ լաքէյ անլաքէյութեան, —նկատեցի ես:

—Սյդ էլ կարելի է, —վրայ բերեց ծեր աղուէսը:

Փետրուար, 1878 թ.



ԱՅԹԱՐՀԻ ՎԵՐՋԸ.

Ե Ր Ա Ջ.



Ինչ թուում էր, թէ դանվում  
եմ Ռուսաստանի խուլ  
անկիւններից մինում, մի  
հասարակ դիւղական տան  
մէջ:

Ահա մի մեծ սենեակ՝ ցածր առաստա-  
ղով, երեք հատ լուսամուտով: Պատերը  
ներկուած են սպիտակ. կահ-կարասիք չկայ:  
Տան առաջ մերկ դաշտավայր է, որը քա-  
նի գնում, ցածրանում ու տարածվում է  
հետուն: Դաշտավայրի վրայ, վարագոյրի  
պէս, կախ է ընկած գորշ, միագոյն երկնա-  
կամարը:

Ես մենակ չեմ: Ինձ հետ սենեակում  
մտա տասը հոգի կան: Նրանք բոլորն էլ  
հասարակ մարդիկ են՝ հասարակ հագնու-  
ած: Սենեակի մէջ աջ ու ձախ, ետ ու  
առաջ անելով՝ նրանք ման են դալիս ան-  
խօս, անձայն, ասես, ծպտեալ քայլերով:  
Նրանք խոյս են տալիս իրար հանդիպե-  
լուց—և, սակայն, անդադար խոսվաւած ու  
անհանդիստ միմեանց են նայում:

Նրանցից ոչ մէկը չըզիտէ, թէ ինչո՞ւ  
է ինքն եկել այս տունը և ի՞նչ մարդիկ  
են նրա հետ շրջողները: Ամենքի երեսնե-  
րին էլ անհանդատութիւն ու վհատու-  
թիւն է նկատվում... Ամենքն էլ հեր-  
թով մտանում են լուսամուտին և ուշի  
ուշով նայում դուրս, կարծես, դրսից մի  
բան են սպասում:

Յետոյ էլի սկսում են սենեակում շոր-  
ջել—աջ ու ձախ, ետ ու առաջ: Մեր մէջ  
ընկած՝ պատվում է մի փոքրահասակ ե-  
րեխայ: Նա ժամանակ առ ժամանակ մի  
բարակ ու միահնչիւն ձիչ է արձակում—  
«հայրի՛կ, վախենում եմ»: — Սյդ ձչից  
սիրտս տակնուվրայ է լինում և ես էլ  
սկսում եմ վախենալ... Ի՞նչից—ինքս էլ

չըզիտեմ: Միայն զգում եմ, որ դայիս,  
վրայ է հասնում մի մե՛ծ, շնա մե՛ծ աղէս:

Իսկ երեխան, մէկ էլ տեսնում ես, էլի  
ճշայ: Ա՛խ, ի՞նչպէս անեմ, որ հեռանամ  
այստեղից: Այստեղ համ օղբ խեղդուկ է,  
համ մութն է, համ սիրտս ճնջւում է...  
Բայց հեռանալու հնար չկայ:

Երկինքը պատանքի է նման: Քամի էլ  
չկայ... Օգն էլ, ասես, անշարժ է. մահա-  
ցե՛լ է, ի՞նչ է. . .

Յանկարծ երեխան լուսամուտի մօտ է  
վազում և նոյն աղեկաւոր ձայնով աղա-  
ղակում. «Տեսէ՛ք, տեսէ՛ք, երկիրը փուլ  
եկաւ, խորտակուեց»:

— «Ինչպէ՛ս, խորտակուե՞ց»: — Այո՛.  
սկզբում տան առաջ դաշտավայր էր, իսկ  
այժմ այդ տունը կանգնած է զարհուրելի  
լեռան գաղաթին: Հորիզոնն ընկե՛լ, ներքե՛ է  
դնացել. իսկ տան հէնց մօտից սկսւում և  
համարեա ուղղահայեաց ցած է իջում կար-  
ծես տեղ-տեղ փորփրած մի սև դահաւանդ:

Մենք բոլորս էլ խմբւում ենք լուսա-  
մուտի առաջ. . . Սարսափը կաշկանդել է  
մեր սրտերը: — «Ահա՛ նա, ահա՛ նա» —  
շշնջում է հարեանս:

Եւ հեռուն, երկրի եզերքն ու մէկ, ամբողջ երկայնութեամբ մի շարժումն է ըսկալում: Մի տեսակ կոլոր ու փոքրիկ թըմբիկներ սկսում են վեր-վեր բարձրանալ և ցած գլորուել:

«Դա ծովն է» — նոյն ակնթարթում անցնում է բոլորիս մտքով: — «Նա այժմ մեզ բոլորիս էլ սակով կանի... Միայն ի՞նչպէս նա կարող է մեծանալ ու վեր բարձրանալ: Ի՞նչպէս նա կը հասնի այս գահաւանդին»:

Եւ սակայն նա մեծանում է, վիթխարի կերպով մեծանում է... Այդ արդէն հեռւում դէս ու դէն գլորուող, ջոկ-ջոկ թըմբիկներ չեն... Դա մի բոլորածաւալ, մի ահեղատեսիլ ալիք է, որ գրկում, պատում է ամբողջ հորիզոնի բոլորքը:

Նա մեր կողմն է թռչում. նա մեզ վրայ է գալիս: Նա սլանում է, որպէս բուք ու բորան. նա եռում, աղմկում է, որպէս դրժոխային խաւար: Ամեն ինչ դողդողում է չորս բոլորը: Իսկ այնտեղ, այն կատաղաւրաց, այն վրայ հասնող, ահռելի ալիքի մէջ լսվում են և՛ ձայնթիւն, և՛ որոտ, և՛ մի տեսակ հազարաբերան երկաթի հաջող...

Ահ, այս ի՛նչ մոռնչիւն է, այս ի՛նչ կոծ  
ու շիւան է:

Այդ երկիրն է, որ ահ ու դողեց ունում  
է այդպէս. . .


Վե՛րջ երկրին. վե՛րջ ամեն բանին:

Երեխան մէկ անգամ էլ ճչաց. . . Ես  
ուզեցի բռնել ընկերիցս, որ վայր չընկնեմ.  
բայց մենք բոլորս էլ արդէն տապալուած,  
ճիւղուած, տակո՞վն էինք եղած. մեզ սրբել,  
տարել էր թանաքի պէս սև ու սառոյցով  
լի, սրտազոչ ալիքը:

Խաւար է. . . յաւիտենական խաւար:

Հազիւ շունչ քաշելով, ես զարթեցայ  
քնից:

Մարտ, 1878 թ.



Մ Ա Յ Ա.


**Շ**ատ տարի սրանից առաջ Պե-  
տերբուրգում ապրելով, ա-  
մեն անգամ, երբ կառք էի  
վարձում մի տեղ դնալու,  
սովորու թիւն ունէի կառապանիս հետ  
զրոյց անել:

Սիրում էի զրոյց անել մանաւանդ գի-  
շերաշրջիկ կառապանների հետ, որոնք միշտ  
մերձակայ գիւղերից եկած աղքատ գիւղա-  
ցիներ էին լինում: Հետները մի-մի քոստա  
ձի առած, մի-մի հատ էլ գեղնագոյն հասա-  
րակ սահնակ, նրանք մայրաքաղաք գալով՝  
յոյս ունէին համ իրանց կերակրել, համ

էլ իրանց տէրերին տալիք դիւղական հար-  
կը վաստակել:

Եւ ահա մի օր ես դրանցից մէկին վար-  
ձեցի... Նա քսան տարեկանին մօտ, բարձ-  
րահասակ, վայելչակազմ ու քաջառողջ  
մի երիտասարդ էր: Աչքերը կապոյտ էին,  
թշերը կարմիր, շէկ մազերն օղակ-օղակ  
գանգուրներով դուրս էին թափվում կար-  
կատած գլխարկի տակից, որ քաշել էր  
մինչև աչքերը: Մի հասարակ, գջլտորուած  
տրմեակ կար հագին:—Նայում ու դար-  
մանում էի, թէ նրա հսկայական թիկուն-  
քը ի՞նչպէս էր տեղաւորուել այդ պատրո-  
տորուած շորում:

Սակայն, կառապանիս սիրունատես և ան-  
միրուք երեսը ախուր ու մռայլ էր երևում:

Սկսեցի հետը խօսել: Չայնն էլ ախուր էր:

—Ջը՛, ի՞նչ է եղել քեզ, եղբայր, հար-  
ցրի ես նրան:—Ի՞նչի ուրախ չես. չըլինի՛  
մի դարդ ունես:

Երիտասարդն իսկոյն չըպատասխանեց:

—Ունեմ, աղա՛, ունեմ,—վերջապէս ձայն  
հանեց նա:—Էն էլ ի՞նչ դարդ. Աստուած  
դուշմանիս չըտայ: Կնիկս մեռաւ:

—Սիրո՞ւմ էիր դու նրան... կնկանդ...

Կառապանը չընայեց իմ կողմը. միայն  
զլուխը մի քիչ կնխ դցեց:

—Սիրում էի, աղա՛: Օխան ամսից ա-  
ւելի է, որ նա մեռել է... բայց մտքիցս չե  
դնում: Սիրաս կտոր-կտոր է լինում...  
Ախար նրա ի՛նչ մեռնելու ժամանակն էր:  
Ջահիլ, առողջ կնիկ էր... Մի օրուայ մէջ  
խօյերան բանը պրծացրեց:


—Բայց բարի սրտի տէ՞ր էր կնիկդ:

—Ա՛խ, աղա՛, — ծանր հոգոց քաշեց խնդ-  
ճը: — Բարի ասե՛ս ու թողնե՛ս. էն էլ ի՛նչ-  
պէս սերով ապրում էինք: Ես տանը չէի,  
երբ նա մեռաւ. այստեղ էի: Իմացայ թէ  
չէ, գլխապատառ թուայ տուն — գիւղը, նը-  
րան թաղել, պրծել էին: Կէս գիշերիցն ան-  
ցել էր, երբ որ գիւղն հասայ: Մտայ տուն,  
իմ խրճիթը. կանգնեցի տան մէջ տեղը  
և սկսեցի կամայ-կամայ ձէն տալ. «Մաշա՛,  
Մաշա՛»: Ականջիս դիպաւ միայն ձռեքի  
ճրճոցը: Էլ չըկարողացայ ինձ պահել.  
լացս բռնեց. ոտներս ծալուեցին, տեղն ու  
տեղը նստեցի և ձեռքս շրախկ — գետնին  
տալով. — Ա՛յ սև հոգ, դու անկուշտ փոր,  
— բղաւեցի ես... Նրան կերար, լափեցիր...  
Ինձ էլ լափիր էլի՛: — Ա՛խ, Մաշա՛:

—Մաշն — աւելացրեց նա յանկարծ  
թուլացած ձայնով: Եւ երասանների ծայ-  
րերը ձեռքից բաց չըթողնելով, թաթապա-  
նով սրբեց աչքից արտասուքի կաթիլը,  
թափ տուեց, գցեց մի կողմը, ու սերը վեր  
քաշեց և էլ ձայն չըհանեց:

Սահնակից ցած գալով, ես նրան տաս-  
նուհինգ կոպէկ աւել տուի: Երկու ձեռ-  
քով գլխարկն առած՝ նա ինձ խոնարհ-  
խոնարհ գլուխ տուեց և ապա ձիւնի  
սփռոցով ծածկուած ամայի փողոցով, ուր  
ձով էր կապել յունուարի սառնամանիքի  
ալեխառն մշուշը, նա կամաց-կամաց ա-  
ռաջ քշեց իւր ձին:

Սպրիլ, 1878 թ.



Յ Ի Մ Ը Բ.



Լինում է, չի լինում մի յիմար:  
 Երկար ժամանակնա ապ-  
 րելիս է լիում անհոգ  
 ու ուրախ: Բայց կամաց-  
 կամաց նրա ականջին  
 սկսում են լուրեր հասնել, որ նրան ամեն  
 տեղ էլ անուղևող, ստորաքարշ մարդու  
 տեղ են դնում:

Յիմարը շփոթվում է և սիրտը դարդ  
 ընկած՝ սկսում է մտածել, թե ինչպէս ա-  
 նի, որ այդ անախորժ լուրերին վերջ տայ:

Մէկ էլ մի անակնկալ միտք է փայլում  
 նրա միջին ու պզտիկ խելքի մէջ... Եւ  
 նա առանց սպասելու, միտքն եկածը կա-  
 տարում է:

Մի ծանօթ մարդ է պատահում նրան  
փողոցում և սկսում է յիմարի առաջ  
դուլել մի յայտնի նկարչի...

— Ի՞նչ էք ասում, — բացականչում է  
յիմարը: — Այդ նկարչի անունը փողոց  
արխիվն է ընկել... Մի՞թէ այդ բանը դուք  
չըզիտեիք: Ես այդ չէի սպասում ձեզա-  
նից... Ի՞նչ յետամնաց մարդ էք:

Ծանօթը փախենում է և խկոյն համա-  
ձայնում յիմարի հետ:

— Ի՞նչ գեղեցիկ գիրք կարդացի այսօր,  
— ասում է նրան մի ուրիշ ծանօթ:

— Ի՞նչ էք ասում, — բացականչում է  
յիմարը: — Ի՞նչպէս չէք ամաչում: Այդ  
գիրքը դուք չ'արժէ: Վաղուց է նրան ոչ  
ոք ձեռքը չի առնում: Մի՞թէ դուք այդ  
չըզիտեիք: — Ի՞նչ յետամնաց մարդ էք:

Այս ծանօթն էլ փախենում է և յի-  
մարի հետ համաձայնում:

— Ի՞նչ հրաշալի մարդ է իմ բարեկամ  
N.N., — ասում է յիմարին երրորդ ծա-  
նօթը: — Ա՛յ, իսկ և իսկ ազնիւ հօգի:

— Ի՞նչ էք ասում, — բացականչում է  
յիմարը: — N.N. յայտնի աւագակ է: Իւր  
բոլոր ազգականներին կողոպտեց: Ո՞վ ա-

սես, այդ չի խմանում: — Բուք յետամնաց  
մարդ էք:

Երրորդ ծանօթն էլ վախեցած՝ յիմարի  
հետ համաձայնում է և երեսը դարձնում  
իւր բարեկամից: Եւ այդպէս՝ ում էլ, ի՛նչ  
էլ որ դովելիս են լինում յիմարի առաջ  
— նա միշտ միենոյն քարօզն է կարդում  
ամենքի զլիսին:

Պատահում է, այն էլ երբեմն միայն,  
որ նախատեսով աւելացնում է. — իսկ դու  
դեռ էլի հաւատում ես հեղինակութիւն  
ասած բանին:

«Հասնա է, մաղձնա է» — սկսում են  
կարծիքներ յայտնել յիմարի մասին նրա  
ծանօթները: — «Բայց ի՛նչ զլուխ ունի»:

«Եւ ի՛նչ լիզու» — աւելացնում են միւս-  
ները: — «Օ, այո՛, նա տաղանդ է»:

Վերջանում է նրանով, որ մի լրագրի  
հրատարակիչ առաջարկում է յիմարին  
իւր լրագրի քննադատական բաժինը կա-  
ռավարել:

Եւ յիմարն սկսում է ամենքին ու ա-  
մեն բան քննադատել՝ տուանց փոխելու իւր  
խօսելու ձևը, իւր բացականշութիւնների  
եղանակը:

Այժմ նա, որ մի ժամանակ գոռում-  
գոչում էր բարձրացնում հեղինակաւորու-  
թեան դէմ, ինքն է հեղինակաւորը. իսկ  
պատանիները նրան երկրպագում են — և  
նրանից վախենում:

Եւ ի՞նչ անեն խեղճ պատանիները: Թէ-  
պէտ վայել չէ առհասարակ երկրպագել  
մէկին... բայց դէ արի ու մի՛ երկրպագիր  
— յետամնացների կարգը կրնկնես:

Յիմարի բախար բանում է վախկոտանե-  
լի մէջ:

Ապրիլ, 1878 թ.





# ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԳԵՆԳԸ.



Յի ճանաչում Բաղդադում  
մեծ Ջաֆֆարին — ախեղեր-  
քի արեգակին:

Մի անգամ — շատ տարիներ  
սրանից առաջ, երբ Ջաֆ-  
ֆարը դեռ պատանի էր — նա գրում էր  
Բաղդադի շրջակայքում:

Յանկարծ նրա ականջին մի խռպոտ  
ձայն հասաւ, որ յուսահատ ու աղերսալից  
օգնութիւն էր կանչում:

Ջաֆֆարն իւր հասակակիցների մէջ  
աչքի էր ընկնում խոհականութեամբ և  
կշռադատ խելքով. նա գլխոտ սրտի տէր  
էր — և վստահ իւր ոյժերին:

Նա վազեց այն կողմը, որտեղից ձայնն էր գալիս և տեսաւ, որ երկու աւազակ մի խեղձ, հալից ընկած ծերուկի պինդ սեղմել են քաղաքի պատին և կողոպտում են:

Ջաֆֆարը սուրը մերկացրեց և աւազակներին վրայ ընկաւ. մէկին սպանեց, իսկ միւսը փախաւ:

Ազատուած ծերուկն ընկաւ իւր ազատչի ոտները և նրա հանդերձի ծայրերը լիզելով՝ բացականչեց. «Ո՛վ քաջ պատանի, քո մեծահոգութիւնն անվարձ չի մնալ: Վրաս մտիկ տուած — ես մի խղճալի մուրացկան եմ երևում. բայց այդ միայն երևում եմ այդպէս: Ես հասարակ մարդ չեմ: Էգուց, վաղ առաւօտեան արի զըլխաւոր բազարը. ես այնտեղ շատրուանի մօտ կ'սպասեմ քեզ — և դու կը համոզուես, որ իմ ասածը ձշմարիտ է»:

Ջաֆֆարը մտածեց. «Այս մարդը, իրաւոր, մուրացկան է երևում: Բայց ինչե՞ր ասես չեն լինում աշխարհիս երեսին: Ի՞նչու չըփորձեմ» — և պատասխանեց. «Հա՛ւ, հայր իմ, կըզամ»:

Ծերուկը նայեց նրա աչքերին ու հեռացաւ:

Միւս առաւօտ, հէնց որ լոյսը մի քիչ  
բացուեց, Չափֆարը դնաց բազար: Մե-  
րուկն արդէն սպասում էր նրան այնտեղ՝  
արմուէնէր յենած շաարուանի մարմարեայ  
թասին:

Նա լուռ ու մունջ առաւ Չափֆարի  
ձեռքը և տարաւ նրան մի փոքրիկ այգի,  
որ չորս կողմից շրջապատուած էր բարձր  
պարիսպներով:

Այգու հէնց մէջ տեղում, կանաչապատ  
լճակի սփին բուսել էր մի ծառ, որ շատ  
անսովոր, գերբնական տեսք ունէր:

Նա նստու նսանու թիւն էր տալիս. միայն  
տերեւներն երկնապոյն էին:

Բարակ, դէպի վեր ոլորած ձղներից կախ  
էին ընկած երեք պտուղ՝ երեք հաս խրն-  
ձոր—մէկը միջակ մեծութեան, երկարաձև,  
կաթի պէս սպիտակ. միւսը՝ մեծ, կոլոր  
ու կաս-կարմիր. երրորդը՝ փոքրիկ, չմշկած  
ու դեղնաւուն:

Սմբողջ ծառը թոյլ կերպով խշշում  
էր, թէև քամի չկար: Նա մի տեսակ բա-  
րակ ու աղիողորմ ճնկճնկոցի ձայն էր  
հանում, ասես, ապակուց լինէր. նա կար-  
ծես զգում էր Չափֆարի մօտենալը:

«Պատանի» — խօսեց ծերուկը, — «քաղի՛ր այս պատուհներից, որը սիրապէ կուզի: Միայն խմացած եղիր, որ եթէ սպիտակը քաղես և ուտես — բոլոր մարդկանցից խելօքը դո՛ւ կը լինես. եթէ կարմիրը քաղես և ուտես — հրէայ Տօաշիլի պէս հարուստ կը լինես. եթէ դեղինը քաղես և ուտես — պառաւ կանանց հաճելի կը լինես: Վրձուի՛ր... էլ մի ուշացնիլ: Մի ժամից յետոյ և՛ այս պատուհները կը թօշնեն, և՛ ինքը ծառը կը գնայ, կը թաղուի երկրի լուռ, անբարբառ խորքը»:

Ջաֆֆարը դուխըր կախ դցեց և մտածմունքի մէջ ընկաւ: — «Ի՞նչպէս անեմ» — խօսեց նա կիսաձայն, կարծես ինքն իրան դատողութիւններ տալով: — «Եթէ որ չափից դուրս խելօք դառնամ, ո՞վ գիտէ, էլ ապրել չուզենամ. թէ որ բոլոր մարդկանցից աւելի հարստանամ — ամենքը ինձ կը նախանձեն. չէ՛, լաւն այն է, քաղեմ և ուտեմ երրորդը — չմշկած խնձորը»:

Նա այդպէս էլ արեց. իսկ ծերուկն իւր անատամ բերանով ծիծաղեց ու ասաց. — «Օ՛, ամենախմաստուն պատանի. դու բարի վիճակ ընտրեցիր քեզ: Ի՞նչից էր հարկա-


ւոր սպիտակ խնձորը: Իսկ առանց այն էլ  
աւելի խելօք ես, քան Սողոմոն խնայողու-  
նը: Քեզ հարկաւոր չէր և՛ կամիր խնձորը...  
Իսկ առանց այն էլ հարուստ կրլինեա:  
Միայն քո հարստութեան ոչ ոք չի նա-  
խանձիր»:

—«Սաս՛ ինձ, ծերունի՛», — ուշքի գալով՝  
խօսեց Ջաֆֆարը. — «Ի՞նչ տեղ է սպրում  
մեր տիրապահ Խալիֆայի պատկառելի  
մայրը»:

Ծերուկը մինչև գետին գլուխ խոնար-  
հեց — և պատանուն ցոյց տուեց ճամբան:

Ո՞վ չի ճանաչում Բաղդադում տիե-  
զերքի արեգակին — մեծանուն, երևելի  
Ջաֆֆարին:

Ապրիլ, 1878 թ.



ՉՈՐՍ ՏՈՂԱՆԻ ԵՐԿՈՒ ՈՏԵՆԱԻՈՐ.



Մի ժամանակ կար մի քաղաք, որի բնակիչներն այնքան սաստիկ սիրում էին բանաստեղծութիւնը, որ եթէ իրար հակից մի քանի շաբաթ էր անցնում և լոյս չէին տեսնում նորանոր, գեղեցիկ բանաստեղծութիւններ — նրանք բանաստեղծեան այգալիսի անպաղարկութիւնը հասարակեան աղէտ էին համարում :

Այն ժամանակ հազնում էին իրանց ամենահին հագուստները, դիմներին մոխիր էին ցանում և խմբուելով հրապարակներում, արտասուք էին թափում, դառն

արաունջ բարձրացնում մուսայի դէմ, որ  
սա մոռացել էր իրանց, թողել, հեռացել  
էր իրանցից:

Ահա այդ շարաբաստիկ օրերից մէկն էր,  
երբ յանկարծ երիտասարդ բանաստեղծ  
Յունիտար յայտնուեց հրապարակ, ուր  
խոնուած էր լացող-կոծող ժողովուրդը:

Նա արագաշարժ քայլերով բարձրացաւ  
հրապարակում յատկապէս պատրաստ-  
ուած ամբիոնը և նշան տուեց, որ ուղում  
է սասանաւոր կարգալ:

Կիտօրներն իսկոյն ձեռքի դաւադան-  
ները շարժեցին: «Կու թի՛ւն, ուշադրու-  
թի՛ւն», — բարձրաձայն դուային նրանք —  
և ամբոխը լռեց, ահանջ դրաւ:

«Բարեկամներ ու ընկերներ» — սկսեց  
Յունիտար բարձր, բալլց ոչ այնքան հաս-  
տատուն ձայնով.

«Բարեկամներ ու ընկերներ, որ ունկնդիր երգերին,  
«Գեղեցկութեան ջերմ պաշտող էք, ներդաշնակին —  
սիրահար,

«Մոայլ թախծի այս վայրկեանը թող ճշտուի՛ք ձեր  
հոգին.

«Կրդայ ժամր. . . պայծառ լոյսը կրհալա՞ծէ մուծ  
խաւար:»

Յու՛նիսօրը լռեց... Իսկ իբրև պատասխան  
նրան, հրապարակի ամեն կողմերից բարձ-  
րացան գոռու՛մ-գոչու՛մներ, շուտց ու քրքի՛ջ:

Ամենքի երեսներն էլ, որ դարձրած էին  
գէպի նա, բարկու՛թիւնից կրակ էին կարել.  
ամենքի աչքերու՛մն էլ վառվում էր ոխ ու  
չարու՛թիւն, ամենքն էլ ձեռքերը վեր բարձ-  
րացրած՝ սպառնում, բռունցքներ էին ցոյց  
տալիս:

«Ինչո՞վ ուզեց զարմացնել» — մռնչում  
էին կատաղի ձայեր:— «Կարցրէ՛ք, հեռացրէ՛ք  
ամբիոնից անշնորհ բանաստեղծին: Իուրս  
արէ՛ք այդ յիմարին: Փտած խնձորներ, հո-  
տած ձուաներ թափեցէ՛ք այդ խեղկատակի  
պլխին: Քարե՛ր, քարե՛ր բերէ՛ք այստեղ»:

Յու՛նիսոն ամբիոնից թաւազլոր եղաւ...  
Բայց նա գեռ տուն չէր հասել, երբ յան-  
կարժ նրա ախանջին դիպան հիասքանչ  
ժափահարու՛թիւններ, գովասանական ա-  
ղաղակներ ու բացականչու՛թիւններ:

Տարակուսանքի մէջ ընկած և, սակայն,  
աշխատելով ամբոխի աչքից անտես մնալ  
(որովհետեւ վասնդաւոր է ամենհի գաղա-  
նին կատաղեցնել) — Յու՛նիսօրը վերադար-  
ձաւ հրապարակ:

Եւ ի՛նչ տեսնի:

Ամբոխի գլխավերեւը, նրա ուսերին, ոսկեայ հարթ ու տափակ վահանի վրայ կանգնած էր Յու՛նիոսի ախոյեան երխտասարդ բանաստեղծ Յուլիոսը՝ ծիրանի քղամիզը հազին, դափնեայ պասկը դանգրահեր գլխին... Իսկ ժողովուրդը չորս կողմից դովում, փառաբանում էր. «Փա՛ռք, փա՛ռք, փա՛ռք աննման Յուլիոսին: Նա սիրտեց մեր սրտերը. նա ցրուեց մեր ախարութիւնը, փարատեց մեր անպատմելի վշտերը: Նա մեզ մի երգ պարզեց, որ քաղցր է, քան մեղըր, ախորժալի է, քան բամբիւր, հոտաւէտ է, քան վարդը, յտակ է, քան երկնային կապուտակը: Տարէ՛ք նրան փառաւոր հանդիսով. խնկի փափուկ քուլաներ սփռեցէ՛ք նրա երկանփառ գլխին. դովացրէ՛ք նրա ճակատը դափնեայ ոստերի մեղմ ծփումներով. անխնայ, լիուլի ցողեցէ՛ք նրա ոտերի տակ Սրաբիայի զմուսի բոյ՛ր անուշահոտութիւնները: Փա՛ռք նրան»:

Յու՛նիոսը մտեցաւ փառաբանողներից մէկին: — Ասա՛ ինձ, ո՛վ համաքաղաքացիա, ի՛նչ երգով բախատաւորացրեց ձեզ Յուլիոսը: Ափա՛ս, ես հրապարակում չէի, երբ

Նա արտասանեց այդ երգը: Աստուած սիրեա, մի կրկնիր, եթէ միտդ ես պահել:

— «Սյգպիսի՛ մի երգ—և միտը չբարահել» — եռանդուն ձայնով պատասխանեց համարադարպային: — «Մ՛ւմ տեղ ես դնում դու ինձ: Լսի՛ր ու ջնճա՛ մեզ հետ միասին»:

«Երգ ու տաղին ջերմ ունկնդիր» — այսպէս սկսեց ճաշխարհիկ Յունիտար...

«Երգ ու տաղին ջերմ ունկնդիր բարեկամներ,  
ընկերներ,

«Որ գեղեցկին, ներդաշնակին նուիրում էք խորին սէր,  
«Ծանր Թախծի այս վայրկեանը Թող չըլուզէ ձեր  
սրտեր.

«Կրգայ ժամը... պայծառ օրը կընալածէ մում  
գիշեր»:

— «Տը՛, ի՞նչպէս է»:

— Ի՞նչ էք ասում, — գոչեց Յունիտար,  
— այդ հօ իմ բանաստեղծութիւնն է: Յուլիոսն, երեխ, ամբաստի մէջ է եղել, կրբ ես արտասանեցի այն: Նա լսել ու միևնոյնը կրկնել է հազիւ միայն մի քանի խօսքերը փոփոխելով, այն էլ, ի հարկէ, անյաջող կերպով:

— «Ա՛, այժմ խնայայ, քո ո՛վ լինելի...  
Դու Յունիտան ես», — առարկեց համարա-

դաքայցին՝ յօնքերը կհանելով:— «Բու կամ  
նախանձօտ ես, կամ յիմար... Ախար մի  
միտք արա, այ թշուառական, թէ քրքան  
վսեմութիւն կայ Յուլիոսի ասածի մէջ.  
«Պայծառ օրը կը հարածէ մութ դիշեր...»:  
Իսկ քանն ի՞նչ անմիտ բան է. «Պայծառ  
լոյսը կը հարածէ մութ խաւար!?» — Ի՞նչ  
լոյս, ի՞նչ խաւար»:

— Մի՞ թէ այդ միւսնոյն չէ... — սկսեց բա-  
ցատրել Յունիոսը:

— «Թէ որ էլի մի ձայն ես հանել, — ընդ-  
հատեց նրան քաղաքացին, — խկոյն կը կան-  
չեմ ժողովրդին... և նա քեզ պատառ-  
պատառ կանէ»:


Յունիոսը խելամուտութիւն համարեց լը-  
ռել. իսկ մի այեղարդ ծերունի, որ լսել էր  
նրա խօսակցութիւնը համաքաղաքացու-  
հետ, մօտեցաւ խեղճ բանաստեղծին և  
ձեռքը դնելով նրա ուսին, ասաց.

— «Յունիոս, դու ասացիր քո սեփա-  
կանը, բայց անժամանակ. իսկ նա ասաց  
ոչ իւր սեփականը, բայց ժամանակի՛ն: Հե-  
տեապէս, նա իրաւացի է. իսկ քեզ մնում  
է միայն խղճիդ մխիթարանքը»:

Բայց մինչև որ խիղճն (ինչպէս կարող

էր և ընդունակ էր... (Թէպէտ, իրան ասած, բաւականին վատ) մխիթարում էր մի կողմը քաշուած ու կուչ եկած Յունիտսին—հեռւում, ցնծութեան որոտայլից աղաղակների և ամենայաղթ արեգակի ոսկեվառ փոշու միջով մերթ կարմրին տալով ծիրանաշող քղամիզից, մերթ մթին տալով ստուերասփիւռ դամբինների տակ, առատարոյր խունկի ամպանման քուլաները ձեղքելով, կուրծքը խրոխտ դուրս ցցած՝ մեծապանծ ու յամբաքայլ առաջ էր ընթանում Յուլիոսը, որպէս դահ բարձրացող մի արքայ... Իսկ արմաւենու երկայն սասերը հերթով խոնարհւում էին նրա առաջ, կարծես իրանց հանդարդ ու հնազանդ սօսաւիւնով արտայայտելիս լինէին նրան հաղհետէ նորոգուող երկրպագութեան այն զգացմունքը, որ այդ ժամին լցնում էր նրա երգերով կախարդուած համաքաղաքացիների սրտերը:

Սպրիւ, 1878 թ.



Ճ Ն Ճ Ղ Ո Ի Կ.

 Որսից տուն վերադառնալիս՝ ես անց-  
նում էի այգու ծառուղիներից  
մեկով: Իմ առաջից վազում  
էր շունը:

Յանկարծ նա ոտը կախ գցեց և սկսեց  
գաղտագողի քայլերով առաջ գնալ, ասեա,  
աչքին որս էր ընկել:

Ես նայեցի մինչև ծառուղու ծայրը և  
քիչ հեռու, ճանապարհի վրայ տեսայ մի  
ճնճողու կի ձաղ, որի կայի չորս կողմը գեռ  
գեղնաւուն էր և գլուխը ծածկուած էր  
աղուամազով:

Նա վայր էր ընկել բնից (քամին սաս-  
տիկ օրօրում էր ծառուղու երկու կողմե-

րում շարուած թխտենիները) և իւր նորարոյս թեխներն անդոր փռած՝ անշարժ նսած էր գեանին:

Շունս կամաց-կամաց մօտենում էր նրան, երբ յանկարծ մօտիկ ծառից մի պառաւ, կուրծքը սև ճնճղուկ վայր նետուելով՝ քարի պէս ընկաւ շան հէնց դնչի առաջ: Փետուրները քրքրած, այլանդակ ու կրակ կարած—նա յուսահատ և աղիտղորմ ճիչ արձակելով՝ մի քանի անդամ թռիչք գործեց դէպի շան բաց ու սրատամ բերանը:

Հապա նետուեց դէպի իւր ձագուկը, որ փրկէ նրան. նա թեքրով պատսպարեց նրան... իսկ այդ րոպէին նրա ամբողջ փոքրիկ մարմինը ահ ու սարսափից դողում էր. նրա ձայնը բրտացել, խրճուել էր. նա ոյժից ընկնում, շունչը կտրվում էր. նա իրան գոհում էր:

Ինչ ահաղին հրէշ պէտք է երևար նրա աչքին իմ շունը, սակայն նա չըզխմացաւ, չըկարողացաւ նստած մնալ բարձր, անփամուզ ձղան վրայ... Ոյժը, նրա կամքից աւելի գորաւոր ոյժը, վայր նետեց նրան այնտեղից:

Տրեղօրս կանգ առաւ ու սկսեց կտ-կտ  
քաշուել... երևի, նա էլ խոստովանեց այդ  
ոյժը:

Ես շտապեցի ես կանչել շփոթուած  
շնիս — և խորին ակնածութեամբ հեռացայ:

Այն, մի՛ ծիծաղէք: Ես այդ բոպէին խո-  
րին ակնածութիւն էի դպում գէպի այդ  
փոքրիկ հերոս թռչունը, գէպի նրա սիրա-  
ւատ անձնադոհութիւնը:

Սէրը, մտածում էի ես, աւելի զօրեղ  
է, քան մահն ու մահուան երկիրը: —  
Միայն նա՛, միայն սէ՛րն է, որ պահում ու  
շարժում է կեանքը:

Ապրիլ, 1878 թ.





Ահա մի շքեղ, փառաւոր լուսաւորուած դահլիճ: Դահլիճում կան բաղմաթիւ կանայք ու տղամարդիկ:

Ամենքի կրեաներն էլ ուրախ ու զուարթ են. խօսք ու զրոյցն — աշխոյժ... Տաք-տաք, աղմկալից խօսակցութիւն է սկսուել մի երգչուհու մասին: Նրան փառաբանում են. նրան երկնային, անմահ են անուանում... Օ, ի՛նչ գողտրիկ կերպով արձակեց նա երէկ իւր վերջին դայլայլիկը:

Եւ յանկարծ, ասես, կախարդական դաւաղանի զօրութեամբ, ամենքի վրայից ահա պոկուեց, թռաւ երեսի ու զլիսի բարակ մաշկը. մի ակնթարթում աչքի ընկաւ


զանգերի մեռելային սպիտակութիւնը, կապ-  
տաւուն անագի գոյն տուին մերկացած  
լնդերքն ու այտոսկրները:

Սարսափած նայում էի, թէ ինչպէս  
դէս ու դէն էին շարժվում այդ լնդերքն  
ու այտոսկրները. ինչպէս մոմերի ու լապ-  
տերների լոյսի տակ շողշողալով՝ շուռ ու  
մուռ էին գալիս այդ ուռած, դուրս ցը-  
ցումած ոսկրի գնտերը — և ինչպէս նրանց  
մէջ պատվում էին ուրիշ, աւելի փոքրիկ  
գնտեր — անիմաստ աչքերի գնտերը:

Ես չէի վստահանում ձեռքս երեսիս  
տանել. չէի վստահանում աչքս գցել հա-  
յելուն, նայել ինձ վրայ:

Իսկ զանգերն առաջուայ պէս այս ու այն  
կողմնէին պատվում... Եւ արագաշարժ լե-  
զուները սուր-սուր ատամների ետեւից, չթի-  
փոքրիկ կտորների նման, կարմրին տալով,  
առաջուայ ձիչ ու աղմուկով թոթովում  
էին, թէ ի՞նչ զարմանալի, ի՞նչ աննման  
կերպով այն անմահ... այն, անմահ երգ-  
չուհին արձակեց իւր վերջին դայլայլիկը:

Սպրիւ, 1878 թ.



Մ Շ Ա Կ Ե Ի Փ Ա Փ Կ Ա Չ Ե Ռ Ն.

Խ օ ս ս կ ց ու Թ ր լ ն.

Մ Շ Ա Կ Ե.



Ի՞նչ ես դու մեր մէջ մտնում:  
Ի՞նչ ես ուղում: Ի՞նչ մերը  
չես... Հեռացիր մեզանից:

Փ Ա Փ Կ Ա Չ Ե Ռ Ն.

Ես ձերն եմ, եղբայրներ:

Մ Շ Ա Կ Ե.

Ո՞նց չէ. մերն ես: Է՛լ ի՞նչ: Մի ձեռքե-  
րիս մտիկ արա, յետոյ. տե՛ս, ինչքան կեղտ  
կայ նրանց վրայ: Համ աղբի, համ կպրի  
հոտ է դալիս նրանցից: Իսկ քոնը, տե՛ս  
քո ձեռքերն ինչպէ՛ս սպիտակ են և ի՞նչ  
հոտ է փչում նրանցից:

Փ Ա Փ Կ Ա Չ Ե Ռ Ն — պարզեցով ձեռքերը.

Հոտ սա:

ՄՇԱԿԸ—Հոտ առնելով.

Մեղայ քեզ: Ասես, երկաթի Հոտ է գալիս:

ՓԱՓԿԱԶԵՌՆ.

Ճէնց այդպէս էլ է: Պահողջ վեց տարի շղթաների մէջ են եղել նրանք:

ՄՇԱԿԸ.

Ի՞նչի Համար:

ՓԱՓԿԱԶԵՌՆ.

Նրա Համար, որ ձեր լաւն էի ուզում. ձեր Հոգան էի քաշում. խեղճ, աղքատ, անուսում մարդկանցից աղաա կեանք էի ուզում տալ. ձեզ նեղողների, ձեզ Հայաժողների դէմ կռւում էի, Հակառակում էի... Իէ՛, առան ու նատայրին:

ՄՇԱԿԸ.

Նատայրի՞ն: Ախար քեզ ո՞վ էր ասում, որ Հակառակուես:

ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՅ ՅԵՏՈՅ.

ՆՈՅՆ ՄՇԱԿԸ—ՄԻՒՍԻՆ.

Ա՛յ, Պեօարա... Մի՞տղ է, անցեալ տարի չէ, մէկէլ տարին են փափկաձեռն, որ քեզ Հետ խօսում էր:

ՄԻՒՍ ՄՇԱԿԸ:

Հա, միտս է... Ի՞նչ կայ որ:

ԱՌԱՋԻՆ ՄՇԱԿԸ:

Ասու՛մ են, նրան էսօր կախ են տալու.  
Էղպէս հրաման է դուրս եկել:

ԵՐԿՐՈՐԳ ՄՇԱԿԸ:

Ի՞նչ է, էլի հակառակուհի՞ է:

ԱՌԱՋԻՆ ՄՇԱԿԸ:

Հո՛ւ, էլի հակառակուհի է:

ԵՐԿՐՈՐԳ ՄՇԱԿԸ:


Էհէ... Բայց գիտե՞ս ինչ կայ, եղբայր  
Միտրից: Չի՞ կարելի, որ մի հնարքով մեր  
ձեռքը զցենք էն չուանը, որից նրան կախ  
են տալու: Ասու՛մ են, տան համար դա  
չա՛նտ մե՛ծ բախտաւորութիւն է:

ԱՌԱՋԻՆ ՄՇԱԿԸ:

Հորդ է ասածդ: Պիտի փորձել, եղբայր  
Պետրա:

Ապրիլ, 1878 թ.





Օգոստոսի վերջին օրերն էին...

Աշունն արդէն վրայ էր  
հասնում:

Արևը մայր էր մրա-  
նում: Մնակնկալ, սաս-

տիկ տեղատարափն, առանց սրտամուկի  
և առանց կայծակի, հէնց նոր էր անցել,  
սլացել մեր լայնատարած դաշտավայրով:

Տան առաջ գանուող այգին վերջապու-  
սից կրակում և անձրևից հեղեղում՝  
բոլորովին այրվում ու ծխում էր:

Նա<sup>1</sup> նստած էր հիւրասենեակում, սե-  
ղանի առաջ և կիտարաց դռն միջով

<sup>1</sup> Խօսքը կնոջ մասին է:

յամառ մտախոհութեամբ նայում էր դէ-  
պի այդին:

Ես դիտէի, թէ ի՛նչ էր կատարվում  
այդ ժամին նրա սրտում: Ես դիտէի, որ  
կարճատե, բայց հողեաանջ կռուից յետոյ,  
նա այդ բուպէին հեղհեակ անձնատուր  
էր լինում մի զգացմունքի, որին այլ ևս  
յաղթել չէր կարողանում:

Նա յանկարծ ոտքի կանգնեց, արագ  
քայլերով դուրս եկաւ այդին և անյայ-  
տայաւ:

Խփեց մէկ ժամը... խփեց երկրորդը. նա  
չըկար:

Սյն ժամանակ ես վեր կացայ և անից  
դուրս դալով, դնայի ծառուղու այն կողմը,  
որ կողմը — ես այդ բանում չէի տարա-  
կուսում — դնայել էր և նա:

Սակն ինչ մթնել էր չորս կողմը: Գի-  
շերն արդէն վրայ էր հասել: Սակայն ծա-  
ռուղու խոնաւ աւաղի վրայ, խաւարի մի-  
ջից անդամ վառ կարմրին տալով՝ աչքի  
էր ընկնում մի կոյորաձև առարկայ:

Ես թեքուեցի: Դա մի մասաղ, գեռա-  
փթիթ վարդ էր: Երկու ժամ առաջ ես  
այդ վարդը տեսել էի նրա կրծքին:

Խնամքով և զգուշու թեամբ բարձրացրի  
ցեխի մէջ ընկած այդ ծաղիկը և վերա-  
դառնալով հիւրասենեակը, դրի նրան սե-  
ղանի վրայ, նրա բազկաթոսի առաջ:

Ս.հա, վերջապէս, նա էլ վերադարձաւ  
և թիթեաքայլ անցնելով սենեակի միջով՝  
գնաց, նստեց սեղանի առաջ:

Նրա դէմքը և՛ դալկացել, և՛ կենդանու-  
թիւն էր ստացել: Նրա գետին խոնարհած,  
կարծես, փոքրացած աչքերն արագ-արագ  
և բերկրալից շփոթութեամբ շարունակ  
այս ու այն կողմն էին վազում:

Նա տեսաւ վարդը, շտապով վեր առաւ,  
նայեց նրա արորուած, ցեխոտուած թեր-  
թիկներին, նայեց ինձ — և նրա յանկարծ  
բեկոտուած աչերում ցոլաց արտասուք:

— Ի՞նչու համար էք լալիս — հարցրի ես:

— Ս՛յ, այս վարդի համար: Տեսէ՛ք, ի՞նչ  
օրն է ընկել նա:

Այստեղ խելքիս վրէպ մի խորիմասա  
բան ասել:

— Ձեր արտասուքը կը լուանայ այդ ցե-  
խը, — ասացի ես ազգու արտայայտու-  
թեամբ:

— Արտասուքը չի՛ լուանում, արտա-

սուքն այրում է, — պատասխանեց նա և  
շուռ դալով դէպի վառարանը, ձեռքի  
ծաղիկը նետեց մարող կրակի մէջ:

— Կրակն աւելի լաւ կայրի, — բացական-  
չեց նա մի քիչ սիրտ առած, և նրա սի-  
րուն աչերում, որոնք արտասուքից դեռ  
փայլփլում էին, խաղաց մի տեսակ համար-  
ձակ և բախտաւոր ծիծաղ:

Ես հասկացայ, որ նա էլ այրուած էր:

Ապրիլ, 1878 թ.



ԻՒ. Պ. ՎՐԵՎՍԿԱՅԵԱՅԻ ՅԻՇԼՏԱԿԻՆ.



Բողոքարտեան մի աւեր գիւղում, հին յարդանոցի ծածքի տակ, որ ձեռաց պատերազմական հիւանդանոցի էր փոխուած, մի ցեխոտ անկիւնում, հասած ու խոնաւ յարդի վրայ երկու շաբաթից աւելի հարինքով հիւանդ պատկած էր նա. խեղճ կինը մեռնելու վրայ էր:

Նա ուշքը կորցրել էր — և ոչ մի բժիշկ նրան չընայեց անգամ: Միայն հիւանդ զինուորները, որոնց նա խնամում ու պահպանում էր, քանի դեռ ինքը ոտքի վրայ կանգնելու ոյժ ունէր, հերթով, մէկ-մէկ վեր էին կենում իրանց վարակուած որջերից,

որպէս զի կտարած կճուճով, որ ջրամանի  
տեղ էր ծառայում, մի քանի կաթիլ ջուր  
մօտեցնեն նրա այրուած ու պապակուած  
շրթուքներին:

Նա ջահիլ էր և դեղեցիկ: Նրան ճանա-  
չում էին բարձր շրջաններում: Նրա մա-  
սին հարց ու փորձ էին անում մինչև ան-  
գամ բարձրաստիճան անձինք: Կանայք  
նրան նախանձում էին, աղամարդիկ վրի-  
տում էին նրա չորս կողմը... Նրանցից եր-  
կու-երեքը սրտում, ծածուկ սիրում էին  
նրան խորին սիրով: Կեանքը նրան ժպտում  
էր. բայց կայ ժպիտ, որ արտասուքից էլ  
դառն է լինում:

Քնքոյշ, հեղի կ սիրտ... և այդպիսի ոյժ,  
այդպիսի անձնադոհու թիւն: — Օգնութեան  
հասնել կարօտեալներին... դրանից աւելի  
նա ուրիշ բախտաւորութիւն չէր զգում...  
և չըզգաց էլ մինչև վերջը: Ուրիշ ամեն  
տեսակ բախտաւորութիւն միայն անցաւ  
նրա մօտով: Բայց նա այդ բանի հետ վա-  
ղուց հաշտուել էր — և ողջ էութեամբ  
բոցավառուած անշէջ հաւատի կրակով,  
նա իւր անձը նուիրել էր մերձաւորներին  
ծառայելու գործին:


Ի՞նչ նուիրական դանձեր ունէր նա թա-  
ղած այնտեղ, իւր հոգու խորքում — այդ  
երբէք ոչ ոք չըզիտէր. իսկ այժմ, ի հարկէ,  
ոչ ոք էլ չի խնայ:

Եւ ի՞նչ կարիք կայ: Զոհը բերուած է...  
դորձը կատարուած:

Սակայն դ՛ուռն է մտածել, որ ոչ ոք մի  
բերան շնորհակալութիւն անդամ չ'ասաց  
նրա դիակին. թէպէտ նա միշտ և քաշվում,  
և խոյս էր տալիս ամեն տեսակ շնորհա-  
կալիքներին:

Թո՛ղ ուրեմն նրա նազելի ստուերը չըվի-  
րաւորուի իմ այս անաղան նուիրաբերած  
ծաղկից, որ ես վստահանում եմ դնել նրա  
շիրմի վրայ:

Սեպտեմբեր, 1878 թ.



ՎԵՐՋԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ.



Մենք մի ժամանակ սերտ ու մտերիմ բարեկամներ էինք... բայց վրայ հասաւ չարաբաստիկ վայրկեանը—և մենք բաժանուեցինք միմեանցից, որպէս թշնամիներ: Անցաւ շատ տարի... Եւ ահա մի անգամ հանդիպելով այն քաղաքը, ուր ապրում էր նա, ես իմացայ, որ նա անյուսալի հիւանդ է—և ինձ հետ տեսնուել է ուղում:

Ես գնացի նրան տեսութիւն. մտայ սեւեակը... Մեր հայեացքներն հանդիպեցան իրար:

Ես հազիւ ճանաչեցի նրան: Տէր Ասա-  
ուած, ի՛նչ օրն էր դցել նրան հիւանդու-  
թիւնը:

Գլուխը բոլորովին կոււնդ, միբուքը նեղ  
ու սպիտակած, երեսը դեղնած ու հիւ-  
ճուած—նա նստած էր անկողնում՝ հապին  
մի հատ շապիկ, այն էլ տեղ-տեղ կարր-  
տուած... Նա ամենաթեթեւ շորի ձնշմանն  
անգամ չէր կարողանում դիմանալ: Նա ինձ  
ուժգին ցնցումով մեկնեց իւր սարսափելի  
նիհար, կարծես մասթափ: Կղած ձեռքը և  
հազիւ հազ մի քանի անհասկանալի խօսք  
թողեց բերանից: Ո՞վ դիտէ — սղջոյն  
էր այդ, թէ՞ նախատինք: Նրա ձնշուած,  
ցաւագար կուրծքը բարձր ու ցածր արաւ—  
և մթադոււած աչքերում, կուչ եկած բի-  
բերի վրայ երևացին արտասուքի երկու-  
նուաղ, վշտատանջ կաթիլներ:

Սիրտս ճնջուեց... Նստեցի կողքին, ա-  
թոռի վրայ և աչքս ակամայ ցած դցելով  
այդ սասկալի և այլանդակ պատկերի ա-  
ռած, ես էլ իմ ձեռքը պարզեցի նրան:

Բայց ինձ թուաց, թէ ձեռքս առնողը—  
նրա ձեռքը չէր:


Ինձ թուաց, թէ երկուսիս մէջ տեղը

Կասած է մի բարձրահասակ, խաղաղադէմ,  
սպիտակ կիւն: Երկայն ծածկոյր պատոււմ  
է նրա ամբողջ մարմինը: Նրա խորունկ,  
դժգոյն աչքերը ոչ մի կողմը չեն նայում:  
Նրա խիստ, դունստ շրթունքներն ոչ մի  
խօսք չեն արտասանում...


Ս'յդ կիւնը միացրեց մեր ձեռքերը... Նա՛  
մեզ հաշտեցրեց ընդ միշտ:

Ս'յո՛... մեզ հաշտեցրեց մահը...

Ապրիլ, 1878 թ.



ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ.



**Մ**այիսի մէկն էր: Վաղ առա-  
ւօտեան ես նստած էի բայ  
լուսամուտի առաջ...

Սրշալոյսը դեռ չէր ծա-  
ղկոյր. բայց զիշերը, մթին ու  
տաք զիշերն, արդէն դունստովում, սրտա-  
նում էր:

Ո՛չ մշուշն էր տեղից շարժվում, ո՛չ էլ  
քամին էր դէս ու դէն թափառում. ամեն  
ինչ միադոյն, լուռ ու մունջ էր... Սա-  
կայն զգալի էր, որ երկիրը շուտով սթա-  
փուկու է քնից—և նօսրացած օդի մէջ  
փչում էր կոշտ խոնաւութիւն:

Յանկարծ բայ լուսամուտի միջով, թե-  
թե վսփսոյ ու խշխշոյ հանելով՝ ներս  
թուա սենեակս մի մեծ թռչուն:

Ես ցնցուեցի և սկսեցի խոր դիտել. . .  
Իսկ թռչուն չէր, դա մի փոքրիկ, թևաւոր  
կին էր. նա հազած էր նեղ ու երկայն, ա-  
լեծածան եզրներով հազուսա:

Նա ոտից-դուխ գորշ, սաղափի գոյն  
ունէր. միայն թևիկների ներսի կողմը  
քնքշափայլ սևին էին տալիս, նոր բաց-  
ուող վարդի նաման: Ծուշաններից հիւսուած  
պսակն օղակի պէս շրջապատում էր նրա  
փոքրիկ, բալորակ դիտի ցիր ու ցան դան-  
դու բները—և սիրամարդի երկու փեռուր,  
թիթեանիկի բեղերի նաման, քաղցրազուարճ  
օրօրում էին նրա փոքրիկ, գեղեցիկ ու  
կորնթարդ ձակաաթի վրայ:

Նա մի երկու անգամ առատաաղի տա-  
կով այս ու այն կողմը սլացաւ: Նրա խիստ  
փոքրիկ երեսը ծիծաղում էր, ծիծաղում  
էին և՛ խոշոր, սև-սև, լուսափայլ աչքերը:

Աչքերի ադամանդափառ շողերը բեկ-  
բեկում էին նրա ուրախ, կայտառն և  
քմահաճ սլացումներում:

Նա ձեռքին բռնած ունէր տափաստանի

Ճաղկի մի երկայն ոստ: Ռուս մարդիկ դրան  
«արքայական գաւազան» են անուանում—  
և նա հէնց գայիսոնի էլ նման է:

Սրնթաց թռչելով իմ վերև, նա այդ  
ճաղիկը թեթև դիպրեց գլխիս:

Ես նետուեցի նրա կողմը. . . բայց նա  
արդէն գուրս թռաւ լուսամուտից — և  
սլացան. . .

Սյգում, ելրեանու թփերի հետաւոր  
խորքում նրան ողջունեց առարակիկն իւր  
առաջին փուփույով, իսկ այնտեղ, ուր նա  
աներևոյթացաւ, այնտեղ մեղմ ու հան-  
դարա շռայլունեց կաթնափայլ երկինքը:

Ես ճանաչեցի քեզ, ու Ֆանտազիայի  
գլխուհի: Իսկ ինձ այցելեցիր պատահամբ,  
դու թռար երիտասարդ պոչաների մօտ:

Օ', պօէզիան, երիտասարդութիւն, կա-  
նացի, կուսական գեղեցկութիւն. . .

Իսկ մի՛ աննթարթ միայն կարող էք  
ցոլալ իմ աչքին — ցոլալ վաղ դարնան  
վաղ առաւօտին:

Մայիս, 1878 թ.



NECESSITAS-VIS-LIBERTAS.



Սհա մի բարձրահասակ, չոր ոսկոր կարած պառաւ՝ երկաթէ երեսով և անշարժ-բուժ հայեացքով. նստած է դուռ մէծ-մէծ քայլերով և իւր փայտի պէս չոր ձեռքով ստաց է մզում մի ուրիշ կնոջ:


Սյս կինն ահագին հասակ ունի .սա քաջազոր է, հասա ու դէր. մկանուներն ստես ճերքուլէսի մկանուներն լինեն. վիզն եզան վզի հաստութիւն ունի. իսկ գլուխը փոքրիկ է, շատ փոքրիկ: Սա էլ կոյր է — և նոյնպէս ստաց է մզում մի փոքրիկ, նիհար աղջկան:

Միայն այս փոքրիկ աղջկայ աչքերն են  
տեսնում. սա դիմադրում է, շուռ է դա-  
լիս, բարակ ու գեղեցիկ ձևաքերը վեր-վեր  
է բարձրացնում. նրա աշխոյժ երեսն ար-  
տայայտում է անհամբերութիւն և անվե-  
հերութիւն... Նա չի ուզում նրանց խօսքը  
լսել. նա չի ուզում այն կողմը գնալ, ուր  
նրան մղում են... բայց և այնպէս ստի-  
պուած է հնազանդել ու առաջ գնալ:


Necessitas - Vis - Libertas.

Ով ուզում է—[Թող Թարգմանի:

Մայիս, 1878 թ.



ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ.



ՄԵՃ քաղաքին մօտ, լայն ճանապարհով ընթանում էր մի ծեր և հիւանդ մարդ։ Նա գնում էր երեւուն քայլերով. նրա նիհար ոտքերը խճճուելով, այս ու այն քարին դիպչելով, այնպէս ծանր ու թոյլ կերպով էին կոխում գետինը, որ կարծես, ուրիշներ լինէին։ Նրա հագուստը պատառոտած, լաթ-լաթ կախ էր ընկած մարմնից. իսկ բաց գլուխը խոնարհուած էր կրճքին... Նա հալկից ընկել էր։

Նա նստեց ճանապարհի ամին ընկած

մի քարի վրայ, առաջ թեքուեց, յենուեց  
կռներին, երկու ձեռքով ծածկեց երեսը և  
ճռմռուած մատների արանքով արտա-  
սուքն սկսեց կաթկաթել չոր ու սպիտա-  
կին տուող փոշու վրայ:

Նա յիշեց անցեալը. . .

Յիշեց, ինչպէս ինքն էլ մի ժամանակ  
առողջ ու հարուստ էր եղել, և ինչպէս  
առողջութիւնը կորցրել ու հարստութիւնն  
էլ բաժանել էր ուրիշներին—իւր բարե-  
կամներին և չարակամներին. . . Իսկ ինքն  
այժմ կտոր հացի կարօտ է, և ամենքն էլ  
երես են դարձնում նրանից—բարեկամներն  
աւելի առաջ, քան չարակամները. . . Մի՞թէ  
նա այժմ այնքան պէտք է ստորանայ, որ  
սկսի ողորմութիւն խնդրել: Նրա սիրտը  
ճնշում էր համ դառնութիւնը, համ ա-  
մօթը:

Իսկ արտասուքը շարունակ կաթ-կաթ  
թափւում էր նրա աչքերից՝ նախշելով  
սպիտակին տուող փոշին:

Յանկարծ նա մի ձայն լսեց. մէկը նրա  
անուէնն էր տալիս: Նա յոգնած զլուխը  
բարձրացրեց և իւր առաջ տեսաւ մի ան-  
ճանօթ մարդ:

Անճանօթի դէմքը հանդիստ էր և ճան-  
րախոհ, բայց ո՛չ խիստ. աչքերը պայծառ.  
էին, բայց ո՛չ շողշողուն. հայեացքը սրա-  
թափանց էր, բայց ո՛չ չար:

— Ի՞նչ ողջ հարստութիւնդ բաժանեցիր  
ուրիշներին — լսուեց մի հանդարտ ձայն...  
— բայց հօ չե՞ս ամսոսում, որ բարու-  
թիւն ես արել:

— Ձեմ ամսոսում, — հառաչանքով պա-  
տասխանեց ծերունին, — միայն այժմ մեռ-  
նում եմ քաղցածութիւնից:

— Այն ժամանակ աղքատներ էլ չէին  
լինիլ աշխարհիս երեսին, որ քեզ ձեռք  
կարկառէին — շարունակեց անճանօթը: —  
Եւ ո՞ւմ վրայ դու կըլիորձէիր քո առաքի-  
նութիւնը: Ի՞նչ կարող վարժուել  
առաքինութեան գործում:

Ծերունին ոչինչ չըպատասխանեց և մը-  
տածմունքի մէջ ընկաւ:

— Այնպէս էլ դու այժմ, մի՛ հպարտա-  
նար, աղքատ մարդ, — դարձեալ խօսեց ան-  
ճանօթը: — Ինձ, ձեռք պարզի՛ր ուրիշնե-  
րին, դու էլ ուրիշ բարի մարդկանց մի-  
ջոյ տուր, որ նրանք գործով ցոյց տան,  
թէ իրանք բարի են:

Ծերունին ուշքի եկաւ, աչքերը վեր  
բարձրացրեց. . . Բայց անձանօթն արդէն  
չքացել էր: — Իսկ հեռում, ճանապարհի  
վրայ երևաց մի անցորդ:

Ծերունին մօտեցաւ նրան և ձեռք պար-  
զեց: — Անցորդը դաժան երես շինելով, շուռ  
եկաւ և ոչինչ չըտուեց:

Բայց նրա կտելից մի ուրիշն էր դալիս.  
սա ծերունուն մի փոքրիկ ողորմութիւն  
տուեց:

Ծերունին այդ փողով հաց առաւ.— և  
քաղցր թուաց նրան ողորմութեամբ ստա-  
ցած այդ հացի կտորը: Ամօթն այլևս չէր  
ճնշում նրա սիրտը, այլ ընդհակառակը՝  
նա զգում էր մի մեղմ, մի անդորր բերկ-  
րանք:

Մայիս, 1878 թ.



Մ Ի Ջ Ա Տ.



Երազումս տեսայ, որպէս թէ  
մօս քսան հողի նստած  
ենք մի մեծ սենեակում.  
սենեակի լուսամուտները  
բաց են:

Մեր մէջ կան կանայք, երեխաներ և  
ճերեր... ամենքս էլ խօսում ենք մի շատ  
յայտնի առարկայի մասին — խօսում ենք  
բարձրաձայն և իրար լաւ չըհասկանալով:

Յանկարծ մի չոր ձայնով արձակելով՝  
ներս թռաւ սենեակը մի մեծ միջատ, որի  
երկարութիւնն երկու վերջոկ կը լինէր. . .  
Ներս թռաւ, պտուտ-պտուտ եկաւ և նստեց  
պատի վրայ:

Նա նման էր ճանճի կամ պիծակի: Մար-  
մինը մուգ-խարտեաշ, ապիակ ու կոշտ.  
Թևերն էլ միևնոյն գոյնի. թաթիկները չուած  
ու թաւամաղ. գլուխը մեծ ու անկիւնաւոր:  
Իսկ գլխի ու թաթիկների գոյնը կարմիր,  
ասես, արիւնի մէջ թաթախուած լինէին:

Սյդ տարօրինակ միջատը գլուխն անդա-  
դար վեր ու վայր, աջ ու ձախ էր շար-  
ժում, թաթիկները դէս ու դէն ման ա-  
ծում... Յետոյ մէկ էլ յանկարծ պատից  
պոկ էր գալիս, ճայթիւններ արձակելով՝  
թռչում էր սենեակի մէջ, դարձեալ նստում  
և դարձեալ մի տեսակ սրանեղութիւն ու  
զգուանք ազդելով՝ առ անց տեղից շարժուե-  
լու, պատի վրայ դէս ու դէն էր օրօրվում:

Ս.մենքիս մէջ էլ նա դադրանք, երկիւղ և  
մինչև անգամ սարսափ էր յարուցանում...  
Մեզանից ոչ մէկն այդպիսի բան չէր տե-  
սած: Ս.մենքն էլ աղաղակում էին. «Կոր-  
ցրէ՛ք, դուրս արէ՛ք այդ հրէշին»: Ս.մենքն  
էլ հեռուից թաշկինակներն էին շարժում...  
որովհետև ոչ ոք սիրտ չէր անում մօտ  
դնալ... և երբ միջատը մի տեղից միւս տեղն  
էր թռչում—ս.մենքն էլ ակամայ ետ էին  
քաշվում:


Մեր խօսակիցներին միայն մէկը — մի դալկադէմ երիտասարդ տարակուսանքով նայում էր բոլորիս վրայ: Նա շարունակ ուսերն էր վեր քաշում և ժպտում. նա ամենևին հասկանալ չէր կարողանում, թէ ի՞նչ էր պատահել մեզ և ի՞նչու էինք այդպիսի իրարանցումի մէջ ընկել: Նա ինքը սենեակում ո՛չ մի միջատ չէր տեսնում և ո՛չ էլ նրա թևերի չարագուշակ ճրթ-ճրթոյն էր լսում:


Յանկարծ միջատը կարծես աչքերը չուեց այդ երիտասարդի վրայ. հապա վայր նետուեց և կպչելով նրա գլխին, խայթեց նրա ճակատը — աչքերին մի քիչ վերև...

Երիտասարդը մի թոյլ անխ քաշեց — և անշունչ ընկաւ գետին:

Սարսափելի ձանձն խեղոյն դուրս թռուաւ... Մենք միայն այն ժամանակ գլխի ընկանք, թէ ի՞նչ տեսակ հիւր էր դա:

Մայիս, 1878 թ.





Մի որբեայրի գիւղացի կնկայ մի-  
նուձար, քսան տարեկան որ-  
դին, որ գիւղի մէջ առաջին  
աշխատաւորն էր համար-  
վում, մեռել էր:

Նոյն գիւղի կալուածատիրուհին իմա-  
նալով գիւղացու կնկայ անբախտութիւ-  
նը, տեսութիւն եկաւ նրան հէնց թաղ-  
ման օրը:

Նա նրան գտաւ տանը:

Խորձիթի մէջ տեղում, սեղանի առաջ  
կանգնած, գիւղացի կինն առանց շտապե-

<sup>1</sup> Իտալական թժուաշ կերակուր է, որ սովորաբար  
պատրաստում են կաղամբից: Մ. Թ.

լու, աջ ձեռքի հաւասար շարժումով  
(ձախ ձեռքը կախ էր պցած) ծխոտուած  
կճուծի խորքից ջրալի շէին գդալ-գդալի  
ետեից առնում ու ամում էր փորր:

Նրա երեսը մաշուել ու մթնացել էր.  
աչքերը կալամբել ու ուռել էին... բայց  
նա այնպէս շիտակ ու հանդարտ էր կանդ-  
նած, կարծես, եկեղեցում լինէր:

«Տէր Աստուած, մտածեց—կալուածա-  
տիրուհին, —այսպիսի մի ժամին նա դեռ  
կարողանում է բերանը բան դնել... Ի՛նչ  
քար սրտի տէր են սրանք ամենքն էլ»:

Եւ նա իսկոյն յիշեց, թէ ինչպէս ինքը  
մի քանի տարի առաջ իւր իննը տարեկան  
աղջկանը կորցնելով՝ ցաւից ու վշտից  
չուզեց Աետերբուրգի շրջակայքում ամա-  
րանոց վարձել և ամբողջ ամառը քաղա-  
քում անց կացրեց:

Իսկ գիւղացի կինը շարունակում էր  
ուռել:

Վերջապէս, կալուածատիրուհին էլ չը-  
համբերեց:—Տատենա՛, —ասաց նա... Ա՛յ  
կնիկ, ես մնացել եմ զարմացած: Մի՞թէ  
դու քո սրդուն չէիր սիրում: Այդ ինչ-  
պէս է, որ դու դեռ ախորժակդ չես կոր-

ցրել. ինչպէս ես կարողանում այդ շէն  
ուտել»:


— Իմ Վասեան մեռաւ, — կամայ ձայ-  
նով ասաց գիւղացի կինը, և ցաւատանջ  
արտասուքները նորից հոսեցին նրա փոս-  
քնկած այտերով: — Ասել է թէ, իմ վերջն  
էլ մտնեցել է, ողջ-ողջ դուխս կտրեցին:  
Բայց դէ հօ չե՞մ կարող շէն էլ դէն ա-  
ծել. չէ՞ որ աղ եմ գցել մէջը:

Կալուածատիրուհին միայն ուտերը վեր-  
քաշեց և թողեց, դուրս գնաց: Նրա հա-  
մար, ի հարկէ, աղը ոչինչ չարժէր:

Մայիս, 1878 թ.



## ԿԱՊՈՒՏԱԿ ԱՅԽԱՐՀ.



Կապուտանկ աշխարհ, կապուտանկ աշխարհ: Աշխարհ լուսնոյ, աշխարհ մատաղ կեանքի և բախտաւորութեան: Ես քեզ տեսայ. . . երազում:

Մի քանի հոգի նստած էինք սիրուն, զարդարուն նաւակի մէջ: Սպիտակ առագաստը, կարապի կրծքի նման, բարձր ու ցածր էր անում օդախաղաց դրօշակների տակ:

Ես չըզխակի, թէ ընկերներս ո՞վքեր են: Բայց օղջ էութեամբս զգում էի, որ նրանք էլ ինձ նման երիտասարդներ են — ուրախ և բախտաւոր երիտասարդներ:

Ես նրանց ամենեին չէի նկատում: Զորս  
բոլորքս տեսնում էի միայն անեղը, կապ-  
տափայլ ծով, որի ամբողջ երեսը յուզ-  
վում էր մանր, ոսկեցու ծփանքից. իսկ  
գլխիս վերևը—նոյնպիսի անեղը, նոյնպիսի  
կապուտակ ծով, որի երեսին, կարծես ծի-  
ծաղելով, քաջայաղթ լողում էր փաղաք-  
շիչ արեգակը:

Եւ երբեմն-երբեմն մեր մէջ բարձրանում  
էր ծիծաղ, բարձրաձայն և բերկրառանա ծի-  
ծաղ, ինչպէս աստուածների ծիծաղը:

Կամ յանկարծ մէկի շրթունքներից  
դուրս էին թռչում գողարիկ խօսքեր, բա-  
նասանդական տողեր՝ ուղւած հրաշալի  
գեղեցկութեամբ, ներշնչուած սրտադին ու-  
ժով... Կարծես ինքը երկինքը ձայնակցելով  
արձագանք էր տալիս այդ ողևորութեան—  
և չորս կողմից էլ ծովն էր համազգաց ալե-  
կոծվում... Իսկ յետոյ դարձեալ տիրում  
էր երջանկալից անգորրութիւն:

Թեթև սուղուելով փափուկ ալիքների  
մէջ, յառաջ էր սահում մեր արագավազ  
նաւակը: Քամին չէր նրան տանողը: Նը-  
րան վարում էին մեր սեփական, խաղուն  
սրտերը: Ուր ուղւում էինք, նա այն կողմն

էր յանուամբ: սլանում էր հնազանդ մեզ,  
ինչպէս կենդանի էակ:

Մենք պատահում էինք կղզիների, կա-  
խարդական, կիսաթափանցիկ կղզիների,  
որոնք շողում, շողշողում էին թանկագին  
ակների, յակինթի ու զմրուխտի նման:  
Բոլորակ ամերից արբեցուցիչ անուշահո-  
տութիւն էր բուրում: Կղզիներից մի քա-  
նիսը սպիտակ վարդերի ու շուշանների  
անձրև էին թափում մեզ վրայ. իսկ միւս-  
ներից յանկարծակի վեր էին սլանում  
ծիածանափայլ, երկայնաթև թռչուններ:

Թռչունները ճախրում էին մեր վերևը,  
շուշաններն ու վարդերը հալվում էին մար-  
դարտեայ փրփուրի մէջ, որը սահում էր  
մեր նաւակի հարթ կողքերով:

Ծաղիկների և թռչունների հետ միա-  
խառն՝ մեր ականջին հասնում էին անո՞յշ  
ձայներ, անո՞յշ - քնքո՞յշ ձայներ... Մեզ  
թւում էր, թէ դրանք կանաչի ձայներ են...  
Երկինքը, ծովը, բարձրում ծփող առա-  
գասար, դեկի տակ քրքջացող ջուրը —  
այդ բոլորը մեզ պատմում էին սէր, խօ-  
սում էին մեզ հետ սիրոյ, երջանիկ սիրոյ  
մասին. . .

Եւ նա, որ ամեն մէկիս սիրելին էր, ամեն մէկիս սրտի հատորն էր—նա այդ բո-  
պէին այդտե՛ղ էր. . . այդտեղ, մեզ հետ,  
աներևոյթ և շնտ մօտ ամեն մէկիս: Մի՛  
անխթարթ էլ—և ահա նրա աչերը կրփայ-  
լատակեն. ժպտար կրխաղայ նրա շրթունք-  
ներին. նրա ձեռքը կրբռնէ քո ձեռքից—  
և քեզ իւր ետեւից կրտանէ, կրթռցնէ  
դէպի անխառամ կղևմի դրախտար:

Օ՛, կապուտակ, երկնափայլ աշխարհ,  
ես քեզ տեսայ երազում:

Յունիս, 1878 թ.



ԵՐԿՈՒ ՀԵՐՈՒՍՏ.

**Ե**րբ իմ առաջ գովաբանում եմ  
հարուստ Բօաշիլիին, որն  
իւր ահագին եկամուտնե-  
րից ամբողջ հաղարներ է  
բաժին հանում մանուկների կրթութեան,  
հիւանդների բժշկութեան և անկեալների  
խնամատարութեան, ես նրան գովում և  
զգածվում եմ:

Սակայն և՛ գովելով նրան, և՛ զգածուե-  
լով, ես չեմ կարող չը յիշել զիւղական մի  
չքաւոր ընտանիքի՝ մարդ ու կնոջ, որոնք  
իրանց քանդած բնում ապաստան տուին  
իրանց մի մօտ աղգականի որբ մնացած  
աղջկանը:

— Կատեային որ մեզ մօտ առնենք, —  
ասում էր գիւղացի կինը, — մեր վերջին  
կոպէկն էլ նրա վրայ կըզնայ, աղի փող  
էլ չի մնալ, որ աղ առնենք, կերակրին  
անենք. . .


— Է՛հ, ոչի՛նչ... մենք էլ կերակուրն ա-  
ռանց աղի կուտենք, — պատասխանեց նրան  
մարդը:

Ո՛ւր այս գիւղացին, ո՛ւր Ռօտշիլդը:

Յուլիս, 1878 թ.



Ծ Ե Ր Ո Ի Կ.



րայ հասան ծանր ու մթին  
օրեր . . .

Ցաւե՛ր ա՛ն ձ՛ն ա կ ա ն,  
ցաւե՛ր սրտիդ սիրելի մարդ-  
կանց, ցո՛ւրա ու խաւա՛ր ծերութեան: Եւ  
այն ամենն, ինչ որ դու սիրում էիր, ինչին  
որ անդարձ անձնատուր էիր լինում, այժմ  
խորտակւում, քայքայւում է: Ճամբէդ դա-  
րիւպար է գնում:

Ի՞նչ անել ուրեմն: Վշտանա՛լ, սիրա մա-  
շե՛ր: Գրանով ո՛չ քեզ, ո՛չ էլ ուրիշին օգ-  
նած կը լինես:

Զորացող, կուչ եկած ծառի վրայ տե-  
րեներն էլ մանրանում ու նօսրանում են,  
բայց կանաչն էլի նոյնն է մնում:

Կուչ եկ' և դու, մտասուղուի՛ր յիշո-  
ղութիւններիդ մէջ — և այնտեղ, խո՛րը,  
շնա խո՛րը, կենդրոնացած սրտիդ խորշում  
քեզ կըշողայ քո նախկին, միայն քե՛զ  
մատչելի կեանքը. կըշողայ իւր հոտաւէտ,  
դեռ տակաւին թարմ կանաչով. կըշողայ  
լի փաղաքշանքով, լի դարնան ուժով:

Բայց զգոյշ կ'աց. . . առաջ չընայես,  
խղճալի՛ ծերուկ:

Յուլիս, 1878 թ.



Թ Ղ Թ Ա Կ Ի Ց .

Երկու բարեկամներ սեղանի մօտ  
նստած՝ թէյ էին խմում :

Մի անակնկալ աղմուկ բարձ-  
րացաւ փողոցում : Լսելի եղան  
աղեկառուի հառաչանքներ, խիտա հայհոյ-  
անքներ, չարախինդ ծիծաղ ու քրքիջ :

— Մէկին ծեծում են, — նկատեց բարե-  
կամներից մինը՝ լուսամտախցի դուրս նա-  
յելով :

— Ի՛նչ է, ոճրազոյժ է, մարդասպան է,  
— հարցրեց միւսը : — Լսի՛ր, ով էլ ուզում  
է լինի, չի կարելի թոյլ տալ այդպիսի  
անդատաստան սանձարձակութիւն : Քնանք,  
մէջ մանկնք, պաշտպանինք նրան :

— Ո՛չ, դա մարդասպան չէ :

— Մարդասպան չէ՞: Ուրեմն գո՞ղ է: Մի  
և նոյն է, գնանք, ազատենք նրան ամբոխի  
ձեռքից:

— Գող էլ չէ:

— Գող էլ չէ՞: Ուրեմն դանձապան է,  
երկաթուղու արտօնատէր է, դօրքի մա-  
տակարան է, ազգային մեկենամս է, իրա-  
ւաբան է, բարեմիտ խմբագիր է, Հասա-  
րակական բարեգործ է... Այնուամենայնիւ  
գնանք, օգնենք նրան:

— Ո՛չ... դա թղթակից է:

— Թղթակից:— Բաս, գիտե՞ս ինչ կայ,  
առաջ թէ յներս վերջացնենք, յետոյ...

Յուլիս, 1878.



ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐ.



Սոյ մի տեսիլ էր...

Ինձ երևացին երկու հրեշ-  
տակ... երկու ոգի:

Ասում եմ, հրեշտակներ, ո-  
գիներ, որովհետեւ երկուսի էլ մերկ մար-  
մինների վրայ ոչ մի հազուստ չկար և  
ամեն մէկի ուսերի ետեւից բարձրանում էին  
երկու զօրեղ ու երկայն թևեր:

Երկուսն էլ պատանիներ էին:

Մէկը—մի քիչ լիք-լիք, հարթամաշկ և  
սևազանգուր: Այլքերը շագանակագոյն և  
սքողում խիտ արտեանուճիքներով: Նա-  
յուրածքը մի տեսակ դադաղադղի, ուրախ  
և ազահ: Երեսը չքնաղ, հրապուրիչ, մի

քիչ յանդուգն, մի քիչ էլ չար: Վարդա-  
գոյն, փափուկ շրթունքները թեթև կեր-  
պով ցնցվում էին: Պատանին ժպտում էր  
կամայ և ինքնավստահ, ինչպէս իշխանու-  
թիւն ունեցող մի մարդ: Նրա շողշուղուն  
մազերի վրայ թեթև կերպով հանդուգում էր  
փարթամ ու շքեղ ծաղկեայ պսակը, որ  
հասնում էր համարեա մինչև մախանուր  
յօնքերը: Ընձառիւծի նախշուն մորթին,  
որի երկու ծայրերն ոսկէ նետով ամրացրած  
էին իրար, բոլորաձև ուսից թեթև քարշ  
էր ընկած դուրս ցցուած ազդրի վրայ:  
Թւերի փետուրները վարդագոյն շողշո-  
ղում էին. իսկ փետուրների ծայրերը կաս-  
կարմրին էին տալիս, կարծես, թարմ ա-  
րիւնով ներկուած լինէին: Ժամանակ առ  
ժամանակ այդ փետուրներն արագ-արագ  
թրթռում էին՝ արծաթաձայն ու ախոր-  
ժալուր շրշիւն բարձրացնելով, ինչպէս  
գարնան անձրևի շրշիւնը:

Միւսը—նիհար էր և մարմինը դեղնա-  
ւուն: Ամեն անգամ, երբ նա շունչ էր  
քաշում, թեթև նշմարվում էին նրա կո-  
ղերը: Նրա մազերը շէկ էին, ցանցառ և  
դիք-դիք: Աչքերը մեծ-մեծ, կոլոր, բաց-

մոխրագոյն. . . Հայեացքն անհանգիստ և  
տարօրինակ-փայլուն: Դէմքի բոլոր դժերը  
սուր-սուր. բերանը փոքրիկ, կիսաբաց. ա-  
տամները ձկան ատամների պէս. քիթը  
երկու կողմից սեղմուած ու կորնթարդ,  
արծուի կողի նման. կզակը դուրս ցցուած  
և ծածկուած սպիտակաւուն աղուամա-  
ղով: Նրա չոր-չոր շրթուներն ամենեւին  
չէին ժպտում:

Դա մի կանոնաւոր, զարհուրելի, անո-  
ղորմ երես էր: (Սսենք, առաջինի — այն  
գեղեցկատեսիլ պատանու երեսն էլ թէև  
սիրուն ու քաղցրաբոյր էր, բայց նոյնպէս  
կարեկցութեան նշան չկար վրան): Երկրոր-  
դի գլխի շուրջը, մազերից կախուած էին  
մի քանի ջարդուած, մէջը փուչ ցորենի  
հասկեր: Նրա մէջքը պատած էր կոշտ-  
կոպիտ, գորշագոյն կտաւով. ուսերի ետևից  
վեր ցցուած մուք-կապոյտ, մթին տուող  
թւերը շարժվում էին մեղմ և սպառ-  
նալից:

Երկու պատանիներն էլ անբաժան ըն-  
կերնէր էին երևում:

Երկուսն էլ յինուած էին միմեանց: Ա-  
ռաջինի փոքրիկ, փափուկ ձեռքը, խաղողի

ողկոյզի պէս, դրուած էր երկրորդի չոր ա-  
նութի վրայ. իսկ երկրորդի երկայն, բարակ  
մատներով նեղ դաստակը, օձի նման,  
ձգուած էր առաջինի կանաչիական քնքոյշ  
կրծքի վրայ:


Ես լսեցի մի ձայն: Ահա ինչ ասաց ինձ  
այդ ձայնը.

«Քո առաջ կանգնած են Սէրն ու Քաղցը  
— երկու հարազատ եղբայրներ, երկու ար-  
մատական հիմունքներ բոլոր կենսունակ  
արարածներին:

«Այն ամենն, ինչ որ կեանք ունի, շարժ-  
վում է, որպէսզի սնունդ ստանայ, և սը-  
նունդ է ստանում, որպէսզի արտադրէ:

«Սէր և Քաղց — սրանց նպատակը մէկ է  
— աշխատել, որ կեանքը չընդհատուի. լինի  
դա սեփական թէ օտարինը՝ միևնոյն ընդ-  
հանուր կեանքն է»:

Օգոստոս, 1878.



Ե Ս Ա Ս Է Ր .

**Ն**րան առւած էր այն ամենն,  
ինչ որ հարկաւոր է մի  
մարդու, որ ուղում է իւր  
ընտանիքի գլխին Աստու-  
ծոյ պատիժ դառնայ:

Նա ծնուած էր առողջ, ծնուած էր հա-  
րուստ—և իւր ամբողջ, բազմամեայ կեան-  
քի ընթացքում առողջ ու հարուստ էլ  
մնալով՝ ոչ մի յանցանք չէր գործած, ոչ  
մի սխալմունքի մէջ չէր ընկած, ոչ մի ա-  
ւելորդ խօսք չէր թողած բերանից և ոչ  
մի բանում չէր վրիպած:

Նա անպայման ազնիւ մարդ էր... Եւ  
հպարտ իւր ազնու թեան գիտակցութեամբ  
—նա դրանով ճնշում էր ամենքին՝ իւր  
ճնողներին, բարեկամներին ու ծանօթ-  
ներին:

Ազնութիւնն էր նրա դրամագլուխը...  
և այդ դրամագլխից նա վաշխառուի տո-  
կոս էր ստանում:

Ազնութիւնը նրան իրաւունք էր տա-  
լիս անողորմ լինել և առանց ցուցմունքի  
բարութիւն չ'անել: Եւ նա անողորմ էր  
ու բարութիւն էլ չէր անում... որովհետեւ  
ուրիշի ցուցմունքով արած բարութիւնը  
—բարութիւն չէ:

Բացի իւր անձից — իւր այնքան օրինա-  
կելի անձից, նա երբէք ոչ ոքի համար հոգս  
չէր քաշում, և սրտանց վրդովվում էր,  
եթէ ուրիշներն էլ նոյն եռանդով հոգ  
չէին տանում նրա անձի մասին:

Նա միւսնոյն ժամանակ իրան եսասէր  
չէր համարում—և եսասէրներին ու եսա-  
սիրութիւնն ամենից աւելի էր պախարա-  
կում և հալածում: Ի՞նչ ասել կուզի...  
Ուրիշի եսասիրութիւնը խանդալում էր  
նրա եսին:

Նա ինքն իւր մէջ ոչ մի թոյլ կողմ  
չըզգալով, չէր հասկանում և չէր էլ հաշտ-  
վում այն մտքի հետ, որ այս կամ այն  
մարդը կարող են թոյլ կողմն ունենալ:  
Առհասարակ նա ոչոքին և ոչինչ չէր հաս-  
կանում, որովհետև ամբողջապէս, ամեն  
կողմից, ներքևից ու վերևից, հտեից ու  
առաջից շրջապատուած էր միայն ինքն  
իրանով:

Նա մինչև անգամ չէր հասկանում, թէ  
ի՞նչ ասել է ներել: Նա ինքն իրան ներել-  
լու կարիք չէր զգում: Էլ ի՞նչու ուրիշ  
ներին պէտք է ներել:

Թէ՛ իւր խղճի գատաստանի առաջ,  
թէ՛ իւր Աստուծոյ առաջ նա — այդ հը-  
րաշքը, առաքինութեան այդ հրէշն աչ-  
քերը վեր ամբարձած, հաստատուն ու  
պարզ ձայնով միշտ արտասանում էր.  
«Այո՛, ես արժանաւոր, ես բարոյական  
մարդ եմ»:


Նա այդ խօսքերը կրկրկնէ նաև մա-  
հուան անկողնում — և նրա քար սիրան  
այն ժամանակն էլ չի ցնցուիլ. մի՛ սիրտ,  
որ իւր վրայ բիծ կամ ճեղք ասած բանը  
չըզիտէ ի՛նչ է:

Օ՛, դու ինքնագոհ, դու անողոր, աժան  
ձեռք բերուած առաքինութեան այլանդա-  
կութիւն. դու աւելի զզուելի ես, քան աղ-  
ներև արատի այլանդակութիւնը:

Դեկտեմբեր, 1878 թ.



ԽՆՋՈՅՔ ՎԵՐԻՆ ԷԸԿԻ ՄՕՏ.



անգամ Վերին էակը մի մե-  
ծահանդէս խնջոյք էր սար-  
քել իւր երկնաշէն, կապու-  
տակ պայտաներում:

Նա բոլոր առաքինութիւններին հիւր  
էր կոչել: Միմիայն առաքինութիւններին...  
տղամարդկանց նա չէր հրաւիրել... մենակ  
կանայք էին հրաւիրուած. . .

Ս.հաղին բազմութիւն էր հաւաքուել—  
թէ՛ մեծ, թէ՛ փոքր: Փոքր առաքինու-  
թիւնները մեծերից աւելի դուրեկան ու  
սիրալիր էին: Սակայն ամենքն էլ դո՛հ էին  
երևում—և միմեանց հետ քաղաքավարու-

Թեամբ զրոյց էին անում, ինչպէս որ այդ  
վայել էր մօտ աղգականներին ու ծանօթ-  
ներին:

Բայց ահա Վերին էակը հիւրերի մէջ  
նկատեց երկու գեղեցիկ կին, որոնք կար-  
ծես բնաւ ծանօթ չէին իրար հետ:

Տանուտէրն այդ տիկիներէից մէկի ձեռքն  
առնելով՝ մօտեցրեց նրան միւս տիկնոջը:

«Բարերարութի՛ւն» — ասաց նա, ցոյց  
տալով առաջինի վրայ:

«Երախտադիտութի՛ւն» — աւելացրեց նա,  
ցոյց տալով երկրորդի վրայ:

Երկու առաքինութիւններն էլ անասելի  
զարմացան: Այն օրից, երբ աշխարհս ստեղ-  
ծուել էր — իսկ աշխարհս հօ վաղուց է  
ստեղծուել — նրանք առաջին անգամն էին  
հանդիպում միմեանց:



Ս Փ Ի Ն Ք Ս.

 ՌԷՐ էլ նայում ես, անվերջ ա-  
լազ է. . . քիչ զեղնին առող,  
գորշագոյն, վերեւից փխրուն,  
ներքեւից պնդացած, ոտի տակ  
ճրթճրթող ալազ:

Եւ այդ ալազուտ անապատի վրայ, այդ  
մեռած, անշարժ փոշու ծովում կախ է  
ընկած եզիպտական սֆինքսի մի ահապին  
գլուխ:

Ի՞նչ են ասում նրա մեծ - մեծ, դուրս  
պրծած շրթունքները, նրա անշարժ-վիքուն,  
վեր ցցուած ունեղները. ի՞նչ են ասում  
նրա աչքերը — այդ երկայն, կէս-քնած, կէս-

ուշադիր աչքերը, որոնց վրայ բարձր տա-  
րածուած են կրկնադեղ յօնքերը:

Բայց նրանք մի բան են ուզում ասել:  
Նրանք մինչև անգամ խօսում են. միայն  
էդիպն<sup>1</sup> է, որ կարողանում է լուծել այդ  
հանելուկը և հասկանալ նրանց անբար-  
բառ լեզուն:

Վա՛հ, այդ երեսը ճանաչա է դալիս. այդ  
երեսի գծերը ծանօթ գծեր են... Նրանց  
մէջ այլևս եզիպատական ոչինչ չկայ: Սպի-  
տակ ու նեղ ճակատ, դուրս ցցուած այտ-  
ոսկրներ, կարճ բեղեր, գանգուր միրուք,  
լայն-լայն դասաւորուած փոքրիկ աչքեր...  
գլխի վրայ միջից կէս սանրուած մազէ դրւ-  
խարկ... Օ՛, այդ հօ դու ես, Կարպ, Սի-  
գոր, Սեմեօ՛ն, դու Եարօսլաւցի, Քեազանցի  
գեղջուկ, դու իմ հայրենակից, դու ուսի

<sup>1</sup> Էդիպը Յունաստանի Թէբա քաղաքի Թագա-  
ւորն էր: Աւանդութիւնն ասում է, որ նրա ժամանակ  
Թէբա քաղաքն ատերում էր սֆինքս անունով մի  
հրէշ: Այդ հրէշն ամեն մէկին, ով անցնում էր նրա  
մօտով, մի հանելուկ էր առաջարկում լուծելու—և  
ով չէր կարողանում լուծել, իսկոյն կուլ էր գնում  
սֆինքս հրէշին: Էդիպը լուծեց այդ հանելուկը և  
քաղաքն ազատեց սֆինքսից:

ոսկոր: Վաղճուց է, որ սֆինքսների կարգն  
ևս ընկել:

Չլինի՞ դու էլ ես ուղում մի բան ասել:  
Այո, դու էլ—սֆինքս ես:

Եւ քո աչքերը—այդ անզոյն, բայց խո-  
րահայեաց աչքերը, նոյնպէս մի բան են ա-  
սում. . . Եւ նրանց լեզուն նոյնպէս համր  
է ու խորհրդաւոր:

Սակայն ս'ըր է քո էզիպը:

Աւանդ, քո էզիպը դառնալու համար,  
բաւական չէ միայն գլխին մուրմուկա՞  
ծածկել, ո՛վ համառուսական սֆինքս:


---

<sup>1</sup> Մ ու ը ը մ ո լ կ ա — հին ձեռ գլխարկ է, որ լիշ-  
վում է ուսաց ժողովրդական երգերում և հէքիաթ-  
ներում: Մի ժամանակ այդ գլխարկը հին ուսական  
հագուստի հետ միասին հաղնում էին սլաւոնաւէր  
(славянофиль) կոչուած կուսակցութեան մի բանի  
ներկայացուցիչները, որոնք այդպիսով կամենում  
էին ցոյց տալ, որ իրանք իբրև թէ աւելի մօտ են  
կանգնած ուս ժողովրդին և աւելի սերտ կապուած  
են նրա հետ: Անտարակոյս, Տուրգենևիքը դրանց է  
ականրկում իւր այս արձակ բանաստեղծութեան վեր-  
ջին տողերում:

Մ. Թ.

Դեկտեմբեր, 1878 Թ.

ՅԱԻԷՐԺԱՀԱՐՄՆԵՐ.



Կանգնած էի գեղեցկատեսիլ,  
 աղեղնաձև փռուած, շքե-  
 թայաշար լեռների ա-  
 ռաջ. դադաթից մինչև  
 ստորոտը նրանց ծած-

կում էր կանաչ, նորաբողբոջ անտառը:

Բարձրում կապուտին էր տալիս հարա-  
 ւային թափանցիկ երկինքը, ուր խաղում էր  
 և՛ արևը իւր ոսկի ճառագայթներով. իսկ  
 ներքեում երեսները կիսով չափ խոտերի  
 մէջ ծածկած՝ խօսում, քչփչում էին խա-  
 դուն առուակները:

Եւ այդ բոպէին ես յիշեցի մի Հին դը-  
րոյց, թէ ինչպէս առաջին դարում, Քրիս-  
տոսի ճնունդից յետոյ, յունական մի ա-  
ռագաստանաւ լողալիս է եղել Էգէյեան  
ծովում:

Կէս օրուայ ժամն է լինում... Եղանակը  
խաղաղ: Յանկարծ բարձրում, դեկավարի  
գլխավերեւը մի ձայն է լսվում, որ պարզ  
ասում է. «Երբ դու անցնելիս կը լինես  
կղզու մօտով, բարձրաձայն կօչիր, — «Մե-  
ռաւ մեծափառ Պանը»<sup>1</sup>:

Ղեկավարը դարմանում է... և ահ ու  
զողի մէջ ընկնում: Բայց երբ առագաս-  
տանաւը սլանալիս է լինում կղզու մօ-  
տով, նա հնազանդուած այդ ձայնին՝ կօ-  
չում է. — Մեռաւ մեծափառ Պանը:

Եւ իսկոյն՝ իբրև պատասխան նրա կօ-  
չին՝ ծովափի ամբողջ տարածութեամբ  
(իսկ կղզին անմարդաբնակ է լինում) լըս-

<sup>1</sup> Պ ա ն — Արկադեան աստուած կամ աստուած  
հովիտների և հովուական կեանքի: Պանը հանդիսանում  
է նոյնպէս երաժշտութեան և պարի սիրող: Նրա  
անունը թարգմանօրէն նշանակում է ամեն բան.  
Նրան պաշտում էին նաև որպէս նշան (սիմվոլ)  
բնութեան:

վում են բարձրաձայն հառաչանքներ, լաց  
ու վայնասուն, աղիոգորմ բացականչու-  
թիւններ. — Մեռա՛ւ, մեռա՛ւ մեծափառ  
Պանր:

Ես յիշեցի այդ զրոյցը... և մի տարօ-  
րինակ միտք ծագեց իմ գլխում. — «Բայց  
եթէ ե՞ս էլ մի բան կոչեմ»:

Շուրջս տիրած ցնձութիւնը տեսնելով,  
ես, ի հարկէ, այդ բուպէին չէի կարող մա-  
հուանի մասին մտածել. ուստի և ինչքան  
մէջս ոյժ կար, կանչեցի. — «Յարեա՛ւ, յա-  
րեա՛ւ մեծափառ Պանր»:

Եւ իսկոյն, օ հրաշք, իմ կանչի վրայ  
կանաչապատ, կիսաշրջան լեռնաշղթայի  
ամբողջ լայնութեամբ օդի մէջ տարածուեց  
միահմուռ ծիծաղ ու քլքլիջ, բարձրացաւ  
ուրախ խօսակցութիւն, շշուկ ու քչփչոց:  
«Յարեա՛ւ նա, յարեա՛ւ Պանր», — աղմկա-  
յոյզ կոչում էին մտտադ ձայներ: — Եւ  
այնտեղ, դէպի առաջ, ինչ կար ու չկար՝  
ողջը խնդաց, ծիծաղեց յանկարծ. ծիծա-  
ղեց առաւել պայծառ, քան արեւը, որ փայ-  
լում էր երկնքում, առաւել խաղուն, քան  
փտակները, որ քչփչում էին խոտերի միջում:  
Հսուեց թեթեւ ու արագափայլ քայլերի

Թփփփոց: Թաւ կանաչի միջից լուսին  
առւաւ այեծուփ շղարշների մարմարեայ  
սպիտակութիւնը. փայլփլեց մերկ մարմին-  
ների թարմ, վառվռուն, վարդաշող կար-  
մրութիւնը. . . Դրանք յաւերժահարսներ  
էին, յաւերժահարսներ, անտառահարսներ,  
բաքոսուհիներ, օրոնք սարալանջերից վա-  
զում էին ներքե, դէպի ասփարակները. . .

Կրանք միանգամից դուրս թափուեցան  
անտառի չորս բոլորքը. երեւցին թփա-  
զարդ եղերքներում: Ահա՛ նրանց աստուա-  
ծային դիմներին ծփում, ծածանւում են  
խոպոպ մազերը. նրանց դեղեցկակազմ, վա-  
յելչատես ձեռքերը օդում բարձր ու ցածր  
անելով՝ խողացնում են պսակներ ու ճնճա-  
ղիկներ—և նրանց հետ սլանում, նրանց  
ուղեկցում է բարձրաձայն ծիծաղը, լու-  
սաշող, ոլխմպխական ծիծաղը. . .

Առաջից սլանում է դիցուհին: Նա ա-  
մենքից բարձրահասակ է ու դեղեցիկ: Նա  
ուսին ձգած ունի կապարձ. ձեռքին բռնած  
—աղեղ. դէպի վեր հիւսած գանդուրների  
վրայ շողշողում է արծաթափայլ լուսնա-  
ղեղը. . .

Դիանա՛, այդ դ՞՞ւ էս:

Դիցուհին կանգ առաւ յանկարծ... և նրա ետեւից իսկոյն կանգ առան նաև բոլոր յաւերժահարսներն: Բարձրաձայն ծիծաղը լռեց: Եւ ես տեսայ, թէ ինչպէս անակնկալ համրացած դիցուհու երեսը պատեց մեռելային դռնատու թիւն, տեսայ, ինչպէս նրա ոտքերը քար կտրեցին, ինչպէս անպատմելի սարսափը լայն բացեց նրա շրթունքները և լայն չռեց նրա հեռուն յառած աչերը... Ի՞նչ տեսաւ նա այնտեղ: Ո՛ւր էր նայում նա:

Ես աչքս դարձրի այն կողմը, որ կողմն ուղղուած էր նրա հայեացքը...

Հեռն, դաշտերի շրջագծից այն կողմը, հորիզոնի հէնց ծայրին, քրիստոնէական եկեղեցոյ սպիտակ զանգակատան վրայ հրքափառ կէտի նման շողշողում էր ոսկի խաչը... Դիցուհին տեսաւ այդ խաչը:


Եւ ես լսեցի իմ ետեւից մի անհաւասար, մի երկար հառաչանք, որ նման էր կտրուած լարի դողգողոցին, երբ նորից շուռ եկայ, յաւերժահարսների հետքն էլ չէր մնացել... Հայնատարած անտառն առաջուայ պէս կանաչին էր տալիս, և միայն տեղ - տեղ, խիստ, ցանցահիւս ձղների միջից աչքի դար-

Կովում ու իսկոյն հալչում էին մի տեսակ  
սպիտակ շորի կտորներ:

Արդեօք յաւերժահարսների շղարշնե՞րն  
էին դրանք, թէ հովիտների խորքերից  
բարձրացող գոլորշին—չըզխտեմ:

Միայն ես շնա տախտուացի, որ դիցու-  
հիները չքացան:

Դեկտեմբեր, 1878 թ.



ԹՇՆԱՄԻ ԵՒ ԲԱՐԵԿԱՄ՝



**Յ**մահ տանջանքի դատապարտուած բանտարկեալը մի կերպ ազատելով իրան բանախց, ձեռք ու ոտքը մէկ արած՝ սկսեց փախչել... Նրա ետեւից սլանում էր բանտապահ զինուորների խումբը:

Բանտարկեալը վազում էր, ինչքան ոյժ ունէր... Հալածողները նրան չէին հասնում:

Բայց ահա նա իւր առաջ տեսնում է սեպեղը մի դեռ—մի նեղ, բայց խոր դեռ... Իսկ ինքը լողալ չըզիտէ:

Մէկ ամիս միւս ամի ձգուած է մի բարակ ու փտած տախտակ: Փախառականն

տան արդէն զրել է տախտակին... Բայց  
մէկ էլ ի՞նչ տեսնի — իրանից շատ մօտ,  
զետի տիին կանգնած են նրա ամենալա-  
բարեկամը և ամենախիտ թշնամին:

Թշնամին ձայն չի հանում, և միայն  
ձեռքերը խաչած՝ մտիկ է տալիս. այն ինչ  
բարեկամը կոկորդը պատուելով՝ բղաւում  
է. — «Սյոք ի՞նչ ես անում, մարդ Աս-  
տուծոյ: Խելքի եկ, այ անմիտ: Մի՞թէ չես  
տեսնում, որ տախտակը բոլորովին փաած  
է: Նա չի գիմանալ քեզ, կրկտարուի — և  
կորուսող անխուսափելի է»:

— «Ի՞նչ անեմ, երբ ուրիշ ճանապարհ  
չկայ... Իսկ լսո՞ւմ ես ինձ հայածնողների  
ձայնը — յուսահատ հառաչեց խեղճ ողոր-  
մելին և միւս ոտն էլ զրեց տախտակին:

— Ոչ, չե՛մ թողնիլ... չե՛մ թողնիլ, որ  
դու կորչես, — աղաղակեց նախանձախնդիր  
բարեկամը և փախտականի ոտքի տակից  
դուրս հանեց տախտակը:

Նա մի ակնթարթում թրմփալով ըն-  
կաւ մրրկածուփ ալիքների մէջ և ջրի տա-  
կը գնաց:

Թշնամին ինքնաբաւական ծիծաղեց և  
թողեց, հեռացաւ: Իսկ բարեկամը նստեց

զեաի աիին և սկսեց իւր խեղճ... խեղճ  
բարեկամի կորուստը դառնազին ողբալ:

Սակայն նրա մաքով անգամ չանցաւ...  
զէթ մի վայրկեան իրան մեղադրելու իւր  
բարեկամի կորստեան համար:


— «Չըլսեց խօսքիս. չըլսեց ց» — շշնջում  
էր նա տխուր ձայնով:

— «Բայց է՛հ, — արտասանեց նա վերջա-  
պէս, — միւնոյն է, նա իւր ամբողջ կեանքը  
բանտում պէտք է մաշէր: Գոնէ այժմ էլ  
չի՛ տանջուիլ. այժմ թեթեւ կըրդայ իրան:  
Երեւի, այդ էր վիճակուած նրան»:

— «Բայց էլի ափսոս, աղամարդի էր»:

Եւ բարի հողին շարունակում էր ան-  
մխիթար սգալ իւր չարաբախտ բարեկամի  
կորուստը:

Դեկտեմբեր, 1878 թ.



Ք Ր Ի Ս Տ Ո Ս.

**Ի**Ն՝ պատանի, համարեա փոքր  
տղայ էի, երբ ինձ տեսայ մի  
ցածրակամար, գիւղական ե-  
կեղեցում կանդնած: Հինա-  
ւուրց պատկերների առաջ, կարմիր բծերի  
նման, ազօտ պլպլում էին բարակ, յստակ  
մտերբ: Ամեն մի փոքրիկ բոց խւր շուրջ  
բոլորած ունէր փոքրիկ, ծխածանաչող պը-  
սակ: Եկեղեցում մի՞նաւուն էր... Բայց իմ  
առաջ մեծ բազմութիւն էր կանդնած:

Բոլորն էլ գիւղացիներ էին — շիկահեր  
գլուխներով գիւղացիներ: Ժամանակ առ-  
ժամանակ այդ գլուխներն սկսում էին ե-

ընկնել, ցած ընկնել ու նորից բարձրա-  
նալ, կարծես հասուն հասկեր լինէին, ո-  
րոնց վրայ հանդարտ այնքներով վազում,  
անցնում է ամրան քամին:

Յանկարծ ետեխցս մի մարդ մտնեցաւ  
ինձ և կանգնեց կողքիս:

Ես աչքս չըդարձրի նրա կողմը, բայց իս-  
կոյն զգացի, որ այդ մարդը — Քրիստոսն էր:

Խանդադրտանքը, հետաքրքրութիւնը և  
երկիւղը միանգամից սաշարեցին ինձ: Ես  
մի կերպ զօրեցի ինձ... և նայեցի հարե-  
ւանիս:

Նրա երեսն, ինչպէս ամենքի երեսն է լի-  
նում, նման էր բոլոր մարդկանց երեսնե-  
րին: Աչքերը մի քիչ վեր ամբարձած, նա  
նայում էր ուշադիր և հանդարտ: Շրթ-  
թուները փակ էին, բայց ոչ իրար սեղ-  
մուած. վերին շրթունքը կարծես հանդ-  
չում էր ներքին շրթունքի վրայ: Միրուքը  
մեծ չէր և մէջից երկու կէս էր արուած:  
Չեռքերը ծալուած ու անշար էին: Հա-  
զուսան էլ այնպէս էր, ինչպէս ամենքի հա-  
զուսան է լինում:

«Սա ի՞նչ Քրիստոս է» — անցաւ իմ  
մտքովս: — «Այսքան պարզ, այսքան հասու-

րանի մարդը—Քրիստոս լինի: Ա՛չ, դա անկարելի բան է»:

Ես երեսս շուռ տուի: Բայց հազիւ աչքս հեռացրել էի այդ պարզ մարդուց, երբ ինձ նորից թուաց, թէ կողքիս կանգնողը հէնց ինքը Քրիստոսն է, որ կայ:

Ես դարձեալ դորեցի ինձ... Եւ դարձեալ տեսայ նոյն երեսը, որ նման էր բոլոր մարդկանց երեսներին, տեսայ նոյն սովորական, թէև անձանօթ գէմքի գծերը:

Յանկարծ ես զգացի մի անսակ սրանեղութիւն — և ուշքի եկայ: Միայն այն ժամանակ հասկացայ, որ հէնց այդպիսի երեսը՝ բոլոր մարդկանց երեսներին նման երեսն է—իսկ և իսկ Քրիստոսի երեսը:

Դեկտեմբեր, 1878 թ.





Ռուք տեսե՞լ էք ծովափին ըն-  
կած հին, գորշագոյն քար,  
երբ գալնան արե օրին, ջրի  
մակընթացու թեան ժամա-  
նակ, կենդանի ալիքներն ամեն կողմից վրայ  
վազելով գէպի այդ քարը, նրան ծեծում,  
նրա հետ խաղում ու գուրգուրվում են.  
տեսե՞լ էք, յետոյ ինչպէս յանկարծ նրա  
մամռապատ գլխին թափվում է գլխափխ-  
րուն, մարգարտաշող, փայլուն փրփուրը:  
Քարը միենոյն քարն է մնում: Միայն  
նրա խորշումս՝ կրեսին գուրս են ցոլում  
փառփուռն գոյներ:

Այդ գոյները վկայում են այն անցած-  
գնացած հեռուոր ժամանակների մասին,  
երբ հայում հասաքարը դեռ նոր էր  
սկսել կարծրանալ և ամբողջապէս վառ-  
վում էր հրափայլ գոյներով:

Այդպէս էլ իմ ծերացած սիրտը քիչ ա-  
ռաջ ամեն կողմից պաշարեցին մատաղ,  
կանացի սրտեր— և նրանց դուրգուրանքից,  
նրանց փաղաքշալի շփումից նա նորից բո-  
ցափառուեց. նրա վրայ դուրս ցուացին վա-  
ղուց արդէն մարած, չքացած ներկերը, երե-  
ւան եկան անցած, շիջած կրակի հետքերը:

Ալիքներն յիտ նահանջեցին... Բայց ներ-  
կերը դեռ չեն աղօտացել, թէև նրանց չո-  
րացնում է խստաշունչ քամին:

Մայիս, 1879 թ.



ԱՂԱԻՆԻՆԵՐ.



Ես կանգնած էի սևապսած բլրի  
գագաթին: Իմ առաջ  
մերթ ոսկեփայլ, մերթ  
արծաթափայլ շողշո-  
ղում էր ծովի պէս սրփ-  
ռումած հաճարի հասուն արար: Բայց այդ  
ծովը չէր ծփում. նրա երեսին չէին խա-  
ղում անհանգիստ ալիքներ: Յղը խեղդուկ  
ու անշարժ էր և դուշակում էր մի մեծ  
փոթորիկ:

Իմ շորս բոլոր դեռ ջերմ ու աղօտ լոյս  
էր սփռում արեգակը. բայց այնտեղ, արախի  
այն կողմը, ոչ այնքան հեռու, մութ-կա-

պոյս ամպակոյսը բռնել էր երկնակամարի  
ամբողջ կէսը:

Ամեն ինչ շունչը կարելի... ամեն ինչ  
թալկացել, նուազում էր արևի վերջին  
չարագուշակ ճառագայթների տակ: Չէր  
երևում ոչ մի թռչուն. ոչ էլ դէթ ձայնն  
էր լսվում: Ճնճողուկներն անդամ թագ էին  
կացել: Միայն մի տեղ, մտերքում, ջրածագ-  
կի մենաւոր, խոշոր տերևը յամսա կեր-  
պով շրշիւն ու շշուկ էր բարձրացնում:

Ափսիսպի սաստիկ բուրմուռքը բռնել  
էր հանդերը: Ես նայում էի կապտագոյն  
ամպակոյսին... և սիրտս խռովվում, նե-  
ղանում էր: Դէ, շուտ արա, մտածում էի  
ես, փայլի՛ր, փայլատակի՛ր, օ՛, սսկի՛ օձ,  
ճայթի՛ր, փղրդն, օ՛, որտա. շարժուի՛ր,  
զլորուի՛ր, երկիր թափուի՛ր, օ՛, չարագէտ  
ամպակոյս. վե՛րջ տուր այս թախծալի  
հեծութեանը:

Բայց ամպակոյսն անշարժ էր: Նա ա-  
ռաջուայ պէս ճնշում էր լուս ու մունջ  
երկիրը... և միայն կարծես աւելի ու ա-  
ւելի ուռչում, մթնանում էր:

Ահա նրա միագոյն, կապուտակ երեսին  
մի բան սպիտակին տալով, սահուն ու հա-

ւասար սլայաւ առաջ, սլայողը, կարծես,  
մի սպիտակ թաշկինակ կամ ձիւնի քու-  
լայ լինէր: Բայց դա մի սպիտակ աղաւնի  
էր, որ թռչում էր գիւղի կողմից:

Նա թռաւ, թռաւ միւնոյն ուղղու-  
թեամբ... և սուղուեց անասուի կուեր:

Սնցաւ մի քանի վայրկեան: Նոյն անո-  
ղոք լռութիւնը շարունակվում էր: Բայց  
ահա արդէն երևում են երկու թաշկի-  
նակ, ձիւնի երկու քուլայ, որոնք ետ են  
դառնում: Դրանք երկու սպիտակ ա-  
ղաւնիներ են, որոնք հաւասար թռիչքով  
դէպի տուն են թռչում:

Վերջապէս, փոթորիկն էլ ձայնեց—և  
սկսուեց տարերքի աղակալից խաղը:

Ես վաղէվաղ հաղիւ տուն հասայ:

Քամին աղակում, կատաղի պառոյաներ  
է անում: Յաճ իջած, շէկ-շէկ ամպերը,  
կարծես գջլատրուած լաթեր, թռչում,  
սլանում են գլխապատառ: Շփոթ, աղ-  
մո՛ւկ—ամեն ինչ իրար խառնվում, իրա-  
րով է անցնում: Սնձրեի սաստիկ տարա-  
փը, օրօրուող սիւների ձև առած, շրշուալի  
թափվում է գետին: Կայծակները հրա-  
կանչ փայլատակումներով աչք են կու-

բացնում. ընդհատուող որոտը արաքում  
ու. դղրդում է, կարծես թնդանօթներ լինի  
արձակելիս: Օդում ճճմբային հոտ է փը-  
չում. . .

Իսկ կարան ծածկի տակ, երգիկի հէնց  
ճայրին, իրար կողքի նստած են երկու ա-  
ղաւնի. նստած է համ նա, որ թռել էր  
խր վարուժանի ետեխց, համ նա, որին  
հետը բերել էր և, շատ կարելի է, աղատել  
նրան կորուստից:

Երկուսն էլ մէջքներն ուռցրել են—և  
ամեն մէկն իւր փոքրիկ թևով դղում է  
դրացու թևի մեղմ շփումը. . .

Բախտաւոր են նրանք: Նրանց նայելով,  
ես էլ ինձ բախտաւոր եմ դղում... Թէե  
ես մենակ եմ... մեն-մենակ, ինչպէս և միշտ:

Մայիս, 1879 թ.



ԷՊՈՒՅ, ԷՊՈՒՅ.



**Ի**նչպէս դատարկ, անեռանդ և  
չնչին է համարեա ամեն մի  
անցած դնացած օրը: Ինչ-  
պէս քիչ հետք է թողնում  
նա: Ինչպէս անմիա - անխորհուրդ անցան  
ժամերն իրար ետևից:

Այն ինչ մարդս ապրել է ուզում: Նա  
իւր աչքի լոյսի պէս սիրում է կեանքը.  
Նա հազար ու մի յոյսեր է կապում այդ  
կեանքին, նա յոյս ունի իւր վրայ, յոյս  
ունի ապագայի վրայ... Ինչ-ի՞նչ բարիք-  
ներ տեսն չի սպասում նա այդ ապագայից:

Բայց ինչո՞ւ է նա երեւակայում, որ միւս,  
գալիք օրերը նման չեն լինիլ Հէնց նոր  
անցած-գնացած օրին:

Նա այդ ամենեւին չի երեւակայում: Նա  
առ հասարակ չի սիրում խորհել — և լսւ  
ել է անում:

«Էզո՛ւց, էզո՛ւց» — մխիթարում է նա  
ինքն իրան, մինչև որ այդ «էզուցը» կը  
դուրէ նրան գերեզման:

Իսկ երբ գլորուեց գերեզման, էլ ինչ  
ասել կուզի, որ ակամայ կը դադարէ խոր-  
հելու:

Մայիս, 1879 թ.



Բ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն.



Ես երազ տեսայ—մտել էի մի  
 ահագին սաորերկրեայ,  
 բարձրակամար տաճար:  
 Տաճարն ամբողջապէս  
 լցուած էր մի տեսակ  
 նոյնպէս սաորերկրային հաւասար յուսով:  
 Տաճարի հէնց մէջ տեղում կանաչադոյն  
 և ալեծածան զգեսա հագին նստած էր  
 մի վեհապանձ կին: Գլուխը ձեռքին խո-  
 նարհած, նա կարծես մտքի ծովն էր ըն-  
 կած:

Ես իսկոյն հասկացայ, որ այդ կինը—  
 հէնց ինքը Բնութիւնն էր— և իսկոյն վայր-

կենսական սարսուռ զգալով՝ սիրաս պատեց երկիւղածութեան զգացմունք:

Ես մտեցայ նստած կնոջը և խոնարհ գլուխ տալով՝ բացականչեցի. «Օ, դու մեր ամենիս մայր, ի՞նչի մասին ես մտածում: Չի՞նք մարդկութեան ապագայ վիճակն է քո խորհրդածութեան նիւթը. դու մտածում ես, թէ ի՞նչպէս մարդկութիւնը պէտք է հասնի հնարաւոր բախտաւորութեան և կատարելութեան»:

Կինը իւր թուխ-թուխ, խստահայեաց աչքերը կամաց դարձրեց դէպի ինձ: Նրա շրթունքները շարժուեցին — և երկաթի զնգոցի նման մի սուր ձայն դոջեց.

— Ես մտածում եմ, թէ ի՞նչպէս անեմ, որ լուի ոտքերի մկանունքներն աւելի ոյժ ստանան, որպէսզի նա աւելի հեշտ կարողանայ ազատուել իւր թշնամիների ձեռքից: Յարձակմունքի և զիմադրութեան հաւասարակշռութիւնը խանգարուած է... Պէտք է այդ բանը վերականգնել:

— Ի՞նչպէս, — թոթովեցի ես: — Ահա՛ թէ դու ինչ ես մտածում: Մի՞թէ մենք մարդիկս քո սիրած զաւակներդ չե՞նք:

Կինը մի փոքր յօնքերը կիսեց: — Բոլոր

արարածներն էլ իմ դաւակներն են, — ա-  
սաց նա, — և ես նրանց մասին միակերպ  
հոգում ու միակերպ էլ նրանց ոչնչաց-  
նում եմ:

— Հապա բարութիւն... բանականու-  
թիւն... արդարութիւն... — սասցի ես  
նորից:

— Նրանք մարդկային խօսքեր են, — հըն-  
չեց երկաթի ձայնը: — Ես ո՛չ բարութիւն  
եմ ճանաչում, ո՛չ էլ չարութիւն... Բա-  
նականութիւնն ինձ համար օրէնք չէ. իսկ  
ի՞նչ բան է արդարութիւն սասձդ: Ես  
քեզ կեանք եմ տուել. այդ կեանքը քե-  
զանից կրխւեմ և կրտամ ուրիշներին —  
ձիձուներին թէ մարդկանց... այդ ինձ հա-  
մար միւնոյն է... Իսկ դու առայժմ դեռ  
պաշտպանուի՛ր — և ինձ մի՛ խանդարիր:

Ես ուզեցի նրան պատասխան տալ...  
բայց իմ չորս բոլոր երկիրը խուլ հա-  
ռաչեց ու դղրողաց — և ես արթնացայ:

Օգոստոս, 1879 թ.





Այլ բանը պատահեց 1803 թուին, — սկսեց իմ վաղեմի ծանօթը, — Սուստերլիցի պատերազմից քիչ առաջ: Այն զորագուհուր, որի սպան էի ես, բնակութիւն էր հաստատել Մորաւիցում:

Մեզ խափու արդելուած էր քաղաքի բնակիչներին որևէ անհանդատութիւն պատճառել. նրանք առանց այն էլ խէթ-խէթ էին նայում մեզ վրայ, ջնացելով որ նրանց դաշնակիցներն էինք համարվում:

Ես մի զինուոր-սպասաւոր ունէի՝ առուներ Եգոր: Նա մօրս նախկին ճարտերիցն էր: Եգորը մի աղնիւ ու հեղ մարդ էր: Ես մանկութիւնիցս ճանաչում էի նրան և հետը մտերմիս պէս էի վարվում:

Մի անգամ իմ բնակած տանը մի ան-  
ակնկալ աղմուկ բարձրացաւ. ականջիս  
հասան լաց-կոծի ու հայհոյանքի ձայներ:  
Բանից դուրս եկաւ, որ տանտիկնոջս եր-  
կու հաւը գողացել էին և նա իմ սպա-  
սաւորին էր դող բռնում: Սպասաւորս  
արդարացնում էր իրան. ինձ վկայ էր բե-  
րում... — «Նա՞ և գողութիւն. Եգոր Սև-  
տամանովը գողութիւն անի՞. անկարելի բան  
է»: Ես աշխատում էի հաւատացնել տան-  
տիկնոջս, որ Եգորն ազնիւ մարդ է, բայց  
ո՛ւմ ես տամ — նա ամենեւին լսել չէր  
ուզում:

Յանկարծ փողոցի ծայրից լսուեց մի  
քանի ձիաների միաձայն ոտնատրոփ: Դա  
ղորքի գլխաւոր հրամանատարն էր, որ  
անցնում էր իւր թիկնապահ խմբով: Նա  
ձին կամայ էր քշում: Հրամանատարը մի  
հասարակ, փորն ու երեսն ուռած մարդ էր:  
Նա նստած էր ձիու վրայ գլուխը կախ  
դցած, իսկ ուսադիրները ցած էին ընկել  
կրճքի վրայ:

Տանտիկինը նրան տեսաւ թէ չէ — գլխա-  
բայ, իրան դցեց ձիու առաջ, ծնկան վրայ  
ընկաւ դետին և կրակ կտրած՝ սկսեց բարձ-

րաձայն դանդատուել, ձեռքով ցոյց տալ  
սպասաւորիս վրայ:

— «Պարոն գեներալ, — աղաղակում էր  
նա, — ձերդ պայծառափայլութիւն, դա-  
տաստան արէ՛ք, օգնեցէ՛ք, փրկեցէ՛ք, այս  
գինուորն ինձ կողոպտեց»:

Եզօրս ձողի պէս ցցուած, գլխարկը ձե-  
ռին, մինչև անդամ կուրծքն առաջ պար-  
զած և ոտներն էլ իրար կպցրած՝ դռան  
շէմքում անշարժ կանգնել էր, ինչպէս  
պահնորդ գինուոր: Նա ձայն-ձագառն չէր  
հանում: Արդեօք փողօցի մէջ տեղում ան-  
ակնկալ կանգ առած, այդ գեներալիտե՞ան էր  
նրա լեզուն փորը գցել, թէ՞ վերահաս փոր-  
ձանքի առաջն էր նա քար կտրել — չըզի-  
տեմ. միայն Եզօրս տեղն ու տեղը մեխուած  
կանգնած էր և աչքերն էր ձայնագայնում:  
Իսկ երեսը գաջի պէս սպիտակել էր:

Գլխաւոր հրամանատարը մի թեթեւակի  
ու խիտ հայեացք ձգելով նրա վրայ, զայ-  
րացած դռնեց. — չը... ի՞նչ ունես ասելու...  
Բայց Եզօրն արձան կտրած՝ ձայն չէր հա-  
նում և միայն առամներն էր դուրս ցցել:  
Կողքից նայողը կրկարժէր, թէ ծիծա-  
ղում է:

Այն ժամանակ հրամանատարը կցկատուր թուրեց բերանից. — Կախեցէ՛ք նրան — և ձին ասպանդակելով՝ առաջ ընկաւ, նախ կամաց քշելով, իսկ յետոյ չափ դցելով: Նրա կուռից սլացաւ ամբողջ շատրքը. միայն մի աղիւսանթ թամբի վրայ շուռ դալով, թռուցիկ նայեց Եգորիս:

Հրամանն անկատար թողնել չէր կարելի. . . Եգորին իսկոյն բռնեցին և տարան կախելու:

Այստեղ նրա շունչը բոլորովին կտրուեց. նա մեռելի պէս ստուաւ և միայն մի երկու անդամ հաղիւ հաղ բացականչեց. «Վայ դիտիս, վայ դիտիս». յետոյ կիսաձայն աւելացրեց. «Սատուած դիտէ, որ ես չեմ արել»:

Վերջին մնաս բարեն ասելիս ինձ, նա աղի՛ - աղի՛ լաց եղաւ: Ես յուսահատութիւնից չըզիտէի ի՞նչ անել: — «Եգօ՛ր, Եգօ՛ր, — աղաղակում էի ես — ախար ի՞նչի ոչինչ չասիր գեներալին»:

— «Սատուած դիտէ, որ ես չեմ արել» — կրկնեց խեղճը արտասուքից խեղդուելով:

Տանախիկինն ինքն էլ սարսափեց: Նա ամենևն չէր սպասում այսպիսի սոսկալի վճռի — և ինքն էլ սկսեց լաց ու կոծ բարձ-

բացնել: Նա ամենքին ու ամեն մէկին աղա-  
ջում, պաղատում էր, որ խնայեն, մեղ-  
քանան. նա հաւատացնում էր, որ իւր  
հաւերը գտնուել են. ասում էր, որ ինքը  
պատրաստ է ամեն բան տեղով բացատրել...


Ինչ ասել կուզի, որ այդ բոլորն անօ-  
գուտ անցաւ: Նո՛ր գիտես, զինուորական  
կարգ ու կանոնը, պատերազմական գիտ-  
ցիպլինան: — Իսկ տանտիկինն հէնց այն է  
մի գլուխ լացում-կոծում էր և ձայնն ա-  
ւելի ու աւելի բարձրացնում:

Եզորս, որին քահանան արդէն խոստո-  
վանել ու հաղորդութիւն էր տուել, դառ-  
նալով ինձ՝ ասաց.

— Ձերդ մեծութիւն, ասացէք այդ կրն-  
կանը, որ հանգարաուի. ի՞նչ է իրան սպա-  
նում... Ես հօ նրան ներեցի:

Ծանօթս իւր ծառայի այս վերջին խօս-  
քերը կրկնելով՝ շշնջաց. «Եզորուշկան, սի-  
րելի՛ս, սո՛ւրբ մարդ էր» — և արտասուքի  
կաթիլները թրջեցին նրա խորշումսձ այ-  
տերը:

Օգոստոս, 1879 թ.





**Ի՞նչ** կրմտածեմ ես, երբ մեռնելիս կըլինիմ,—եթէ միայն մտածելու կարողութիւն կունենամ ես այդ ժամանակ:

Արդեօք իմ մտածմունքն այն կըլինի, որ ես լաւ չ'օգտուեցի կեանքից, որ քնած մնացի և ձեռքիցս թռաւ այդ կեանքը, որ չըկարողացայ ճաշակել կեանքի վայելքները:

«Ի՞նչպէս, արդէն մահ: Այսպէս շուտով: Ա՛չ, այդ անկարելի է: Չէ՞ որ ես դեռ ոչինչ չեմ արել... Ես միայն պատրաստուեմ էի մի բան անել»:

Արդեօք կըսկսեմ անցեալս մտարբերել. մտքով կանդ առնել կեանքիս անցած-դնացած մի քանի պայծառ վայրկեանները

վրայ, կանդ առնել սրախ այնքան սիրելի  
դէմքերի ու կերպարանքների առաջ:


Թէ՞ իմ յիշողութեան մէջ կը պատկե-  
րանան իմ վատթար գործերը—և տարա-  
ժամ ապաշաւանքի այրող վիշաք կը պա-  
շարէ հոգիս:

Կամ դուցէ իմ մտածմունքը այն կըլինի  
միայն, որ իմանամ թէ ի՞նչ է սպասում  
ինձ հանդերձեալ աշխարհում... Բայց ո՞վ  
գիտէ, մի բան սպասու մ է ինձ այնտեղ, թէ ոչ:

Ա՛չ... ինձ թւում է, որ ես կաշխատեմ  
ոչինչ չըմտածել—և կըստիպեմ ինձ որ և է  
յիմար բանով զբաղուելու, որպէս զի կա-  
րողանամ ուշ ու միտքս հեռացնել իմ  
առաջ սեին տուող դաժան խաւարից:

Աչքիս առաջ մեռնող մի մարդ գան-  
դատվում էր, որ չեն ուզում իրան բոված  
տկողին տալ կռծելու... և միայն այնտեղ,  
նրա մարած աչքերի խորքում, մի բան  
դողում ու թրթռում էր, ինչպէս դողում,  
թրթռում է մահացու վերք ստացած  
թռչնի գնդակահար թևը...

Օգոստոս, 1879 թ.



„ՈՐՔԸՆ ԳԵՂԵՑԻԿ, ՈՐՔԸՆ ԹԱՐԾ ԷԻՆ  
ՎԱՐԳԵՐԸ...“

 **Չ**եմ յիշում իրանդ և ե՞րբ,  
բայց վաղ՞ուց, շատ վաղուց  
ես մի բանաստեղծութիւն  
կարգացի: Այդ բանաստեղ-  
ծութիւնը շուտով մոռացայ... բայց նրա  
առաջին տողը մնաց մտքումս.

«ՈՐՔԱՆ զԵՂԵՑԻԿ, ՈՐՔԱՆ ԹԱՐԾ ԷԻՆ ՎԱՐԳԵՐԸ...»

Այժմ ձմեռ է. սառնամանիքը կապել,  
կաշկանդել է լուսամուտներին ապակիները:  
Մութ սենեակում միայն մէկ հատիկ մում

է վառվում: Քաշուել եմ անկիւն և լուռ  
ու մունջ նստած եմ. իսկ գլխիս մէջ շա-  
րունակ հնչում ու հնչում է.

«Մըքան գեղեցիկ, ո՞րքան թարմ էին վարդերը...»

Ահա ինձ տեսնում եմ քաղաքից դուրս,  
ուռսական մի տան ցածր լուսամուտի ա-  
ռաջ կանդնած: Սահրան երեկոն մեղմ հա-  
լուելով, փոխվում է գիշերի: Տաք օդում  
զգալի է ասիլիայի և յափրու կի բուրմունքը:  
Իսկ լուսամուտի մօտ, գլուխն ուսին խո-  
նարհած, ձեռքն առաջ պարզած և վրան  
յենուած՝ նստած է մի աղջիկ. նա լուռ ու  
ուշադիր նայում է երկնքին, նա կարծես  
սպասում է, թէ ե՞րբ կըրցոյան այնտեղ առա-  
ջին աստղերը: Որպիսի՞ պարզ, որպիսի՞ ան-  
նենդ ոգևորութիւն նրա մտախոհ աչերում.  
որպիսի՞ սրտաշարժ անմեղութիւն նրա  
բայ, ասես մի բան աղերսող շրթունքներին.  
ինչպէ՞ս հաւասար շնչում է նրա գեռ տա-  
կաւին չրփթթած, դեռ ո՞չ մի բանով չը-  
յուզուած կուրծքը. ինչպէ՞ս մաքուր ու  
քնքոյշ է նրա մտաող գէմքի պծաղրու-  
թիւնը: Ես չեմ յանդգնում խօսել նրա

Հեա, բայց որքան նա մտա է սիրելի է, իմ  
հոգուն. որպէս բարախում ու թրթում  
է իմ սիրտը.

«Ո՛րքան զեղեցիկ, ո՛րքան թարմ էին վարդերը...»

Սենեակս աւելի ու աւելի մթնանում է...  
Մտի փոքրիկ մնացորդը պլպլում, ճար-  
ճատում է. ցածր առաստաղի վրայ երեր-  
վում, դողդողում են թուռցիկ սառեններ:  
Գուրսն աղվկում ու կատաղում է սառնա-  
մանիքը—և ինձ թւում է, թէ լսում եմ  
մի տաղակալի, պառաւական շշնջոյ . . .

«Ո՛րքան զեղեցիկ, ո՛րքան թարմ էին վարդերը...»

Իմ աչքիս նկարվում են այլ պատկեր-  
ներ, այլ տեսարաններ... Ահա լսում եմ  
զիւզական ընտանեկան կեանքի ուրախ  
աղմուկ ու ծիծաղ: Երկու փոքրիկ, իրար  
յենուած շիկահեր գլուխներ իրանց փայ-  
լուն աչիկներով քաջ-քաջ նայում են վրաս.  
զսպած ծիծաղը ցնցում է նրանց վար-  
դադոյն սյտերը. ձեռքերը փաղաքշանքով  
իրար փաթաթած և անդադար միմեանց  
խօսքը կտրելով՝ բարի ու կայտառ ձայներ

են հանում այդ երկու մասողաշ էակները:  
Իսկ մի քիչ հեռու, սենեակի խորքում,  
մի ուրիշի մասողաշ ձեռքերը մատերի  
խառնուփնթոր շարժումներով վազվզում  
են հին պիանոյի կլավիշների վրայ — և  
Հանների վալսը չէ կարողանում խլացնել  
նահապետական հեշտանուխի թշթշոցը...

«Ռոբբան գեղեցիկ, ռոբբան Թարմ էին վարդերը...»

Մոմն աղօտ պլպլում ու մարում է... Այն  
ո՞վ է այնտեղ, որ այնպէս խուլ ու խրու-  
պտա հազում է: Բլիթի նման գալարուած,  
ոտերիս տակ ցնցվում ու կուչ է գալիս  
պառաւ գամփոս — իմ միակ ընկերը... Ես  
մքսում եմ... ես գողում եմ... Իսկ նը-  
րանք... նրանք այլևս չկան, նրանք բոլորն  
էլ մեռել... մեռել են...

«Ռոբբան գեղեցիկ, ռոբբան Թարմ էին վարդերը...»

Սեպտեմբեր, 1879 թ.





**Փ**ոքրիկ շողենաւով Համբուրգից  
 Հօնդօն էի գնում: Շողե-  
 նաւի վրայ միայն երկու ճա-  
 նապարհորդ էինք— ես և մի  
 փոքրիկ էգ կապիկ, որին մի վաճառական  
 Համբուրգից նուէր էր ուղարկում իւր  
 անզլիացի գործակից-ընկերին:

Կապիկը փոքրիկ, բարակ շղթայով կապ-  
 ուած էր տախտակամածի վրայ դանուող  
 նստարանից և շարունակ դէս ու դէն ընկ-  
 նելով՝ ազիտորմ ձւում, ձչում էր, թըռ-  
 չունի ձայնով:

Ամեն անգամ, երբ անցնում էի նրա  
 մօտով, նա պարզում էր ինձ իւր փոքրիկ,

սառն ու սև ձեռքը և տխուր, համարեա մարդկային աշխիներով նայում էր երեսիս: Ես առնում էի այդ ձեռքը — և կապիկը դադարում էր ճշալ ու դէս ու դէն ընկնել:

Ծովը բոլորովին հանդարտ էր: Անշարժ, արձձագոյն սփռոցի նման նա փռուած էր չորս բոլորքը — և այնքան էլ մեծ չէր երևում: Ծովի երեսը պատել էր թանձր մառախուղը, որ հասնելով մինչև կայմերի ծայրերը՝ իւր փափկութեամբ, իւր մեղմ մթութեամբ կուրացնում ու յողնեցնում էր մարդու հայեացքը: Այդ մթութեան մէջ աղօտ-կարմիր բծի նման կախ էր ընկած արեգակը, իսկ երեկոյեան գէմ նա ամբողջապէս բացափօռւում էր և մի տեսակ խորհրդաւոր ու տարօրինակ կերպով կարմրին էր տալիս:

Շողենաւի քթի տակից դուրս թռչելով՝ իրար ետևից վազում էին ջրի երկար, ուղղատարած ծալքեր, որոնք նման էին մետաքսեայ ծանր գործուածքի ծալքերին, նրանք վազում էին և շարունակ լայնանալով ու կնձռուելով, վերջապէս հարթւում, հաւասարւում էին և ծփծփալով

չքանում: Միակերպ ձանչող անխնեբի  
տակ կծկվում էր ուռձացած փրփուրը:  
Այդ փրփուրը կաթնի պէս սպիտակին տա-  
լով և մեղմ վշվշալով՝ փշրվում, օձա-  
պտոյտ հոսանքներով ցիր ու ցան էր լի-  
նում, և կրկին միախառնուելով՝ կորչում,  
չքանում էր մթութեան մէջ:

Աւելի անախորժ, քան կապկի ճւճւոցը,  
անդադար և աղերսագին ճնդճնդում էր  
ղեկի մօտ կախուած փոքրիկ զանգակը:

Երբեմն-երբեմն ծովահորթն էր ջրի երես  
դուրս պրծնում և խեղոյն գլխի վրայ շուռ  
գարով՝ էլի սուղվում մեղմ յուղուած  
ջրի յտակը:

Նաւապետը, որ մի մնայլ, արեւոտ երե-  
տով և չխօսկան մարդ էր, կարճ ծխամոր-  
ճը բերանին՝ ծխում էր և բարկութեամբ  
թուքը շարտում սառած ծովի մէջ:

Իմ բոլոր հարցերիս նա պատասխա-  
նում էր կցկտուր մութմրթոցով: Ճարս  
կարած՝ ես էլի դիմում էի իմ միակ ու-  
ղեկցիւս — կապկին:

Նստում էի նրա կողքին և նա դադա-  
րում էր ձշալ. նա դարձեալ իւր ձեռքը  
մեկնում էր ինձ:

Երկուսս էլ զգում էինք անշարժ մա-  
ռախուղի քնաբեր խոնավութիւնը, և եր-  
կուսս էլ միեւնոյն անգիտակցական մտախո-  
հութեան մէջ ընկած՝ այդպէս մնում էինք  
իրար կողքի նստած, ասես, հարազատներ  
լինէինք:


Ես այժմ ժպտում եմ... Բայց այն ժա-  
մանակ ուրիշ զգացմունք էր յուզում իմ  
սիրտը:

Մենք բոլորս էլ մի մօր զաւակներ ենք  
— և ինձ ախորժելի էր, որ այդ խղճուկ,  
փոքրիկ գաղանն այնպէս վստահացած՝  
հանդարտօրէն ու կաշոււմ էր ինձ, կարծես,  
իւր հարազատ արիւնասկցին:

Նոյեմբեր, 1879 թ.



Ն. Ն.



Նանդարտ և սիգարայլ դու անց-  
նում ես կեանքի ուղին. անց-  
նում ես առանց արտասու-  
քի, առանց ժպտի—և քեզ  
հազիւ կենդանութիւն է ներ-  
շնչում մարդկանց անկարեկից ուշադրու-  
թիւնը:

Դու բարի և խելօք կին ես. . . բայց  
քեզ օտար է ամեն բան—քեզ հարկաւոր  
չէ ոչ ոք:


Դու գեղեցիկ ես—բայց ոչ ոք չի կա-  
րող ասել՝ արդեօք գնահատում ես դու

քո գեղեցկութիւնդ թէ ոչ: Իսկ անկարե-  
կից ես ինքդ — և ուրիշից էլ չես պահան-  
ջում կարեկցութիւն:

Յո հայեացքը խոր է, բայց ոչ մտա-  
խոհ: Եւ այդ պայծառ խորութեան մէջ  
տիրում է դատարկութիւն:

Այդպէս և Ելիսեան դաշտերում, Գլխու-  
կի սիգահնչիւն մեղեդիներին ներդաշնակե-  
լով՝ առանց տխրութեան և առանց ու-  
րախութեան անց ու դարձ են անում քա-  
նի քանի՛ վայելչակազմ ստուերներ:

Նոյեմբեր, 1879 թ.



Կ Ա Ն Ք Ն Ի Ր<sup>1</sup>.



Կանգնիր: Մ'նա՛ս այդպէս յարատե  
խմ յիշողութեան մէջ, ինչ-  
պէս որ ես քեզ տեսնում  
եմ այժմ:

Նրթունքներիցդ դուրս է  
թաշում վերջին ողկից հնչիւնը, աչերդ  
չեն փայլում, չեն շողշողում. նրանք մը-  
թագունվում են, նրանց փակում է երջան-  
կութիւնը, նրանց վրայ ծանրանում է դե-

<sup>1</sup> Այս արձակ բանաստեղծութիւնը վերաբերում  
է Տուրգենևի սիրոյ առարկային՝ երգչուհի Վիար-  
դօին, որն, ինչպէս լալտնի է, փոքր դեր չըխաղաց  
մեծանուն րոմանիստի կեանքում: Ե. Թ.

դեցկութեան հրջանիկ գիտակցութիւնը,  
այն դեղեցկութեան, որ քեզ յաջողուեց  
արտայայտել, այն դեղեցկութեան, որի ե-  
տեւից, կարծես, դու տարածում ես քո  
յաղթական, քո յողնատանջ բազուկները:

Այդ ի՞նչ լոյս է, որ արևի լոյսից էլ  
հուրք ու յատակ, այդպէս սփռուել է  
մարմնիդ բոլոր մասերում, հագուստիդ  
ամենամանր ծալքերում:

Այդ քր Սատուածն է, իւր փայփայլիչ  
շնչով այդպէս յետ մղել, մէջքիդ սփռել  
քո զկրուցան, քո ալեծուփ գանգուրները:

Նրա համբոյրն այրվում է, մարմարիտնի  
պէս սպիտակ, գունատ ճակատիդ:

Ահա՛ նա—ահա՛ գանուած գաղանխքը.  
գաղանխք պօէզիայի, կեանքի և սիրոյ:  
Ահա՛ անմահութիւնը: Ել ուրիշ անմա-  
հութիւն չկայ և չի՛ էլ հարկաւոր:—Այս  
վայրկեանիս դու անմահ ես:

Կանցնի՛ այդ վայրկեանը—և դու նորից  
նոյն աճիւնն ես, նոյն կիներ, նոյն մանու-  
կը... Բայց ի՞նչ փոյթ քեզ... Այս վայր-  
կեանին դու հանդիսացար ամենքի պսակը,  
դու բարձրացար, դու հեռացար այն ամե-  
նից, ինչ որ անցողական է, ինչ որ ժա-

մանակաւոր է:—Եւ քո այդ վայրկեանն  
երբէք չի՛ վերջանալ:

Կանգնի՛ր: Եւ թող, որ ես էլ հաղորդա-  
կից լինեմ քո անմահութեան. նետի՛ր և  
խմ սրտի մէջ մի շող քո յաւիտենակա-  
նութիւնից:

Նոյեմբեր, 1879 թ.



Ա Ր Ե Ղ Ա Յ.



ճանաչում էի մի արե-  
ղայ, մի սրբակեաց ճղնա-  
ւոր: Նա միայն աղօթ-  
քով էր ապրում, աղօթքով  
էր քաղցրացնում իւր կեան-  
քը — և այդ քաղցրութեամբ արբեցած՝  
նա այնքան երկար կանգնած էր մնում  
եկեղեցու սանն յատակի վրայ, որ նրա  
ոտերը, ճնկներին ներքե, փետացել, ցրտից  
աարուել էին: Նա չէր զգում, որ ոտեր  
ունի — և միշտ կանգնած աղօթում էր:

Ես նրա արածն հասկանում էի — և,  
դուցէ, նախանձում էլ էի նրան. բայց

Նա էլ պէտք է իմ արածն հասկանար և  
չըմեղադրէր ինձ—ի՛նձ, որին մատչելի չեն  
Նրա ուրախութիւնները:

Նա այնտեղ հասաւ, որ ոչնչացրեց իրան,  
ոչնչացրեց իւր ատելի եսը. բայց չէ՞ որ  
ես էի, եթէ չեմ աղօթում—ինքնասիրու-  
թիւնից չէ:

Իմ եսն ինձ համար, գուցէ, առաւել  
ծանր ու զզուելի է, քան Նրա եսը—Նրա  
համար:

Նա դառաւ այն, ինչ բանում որ կարող  
է մոռացութեան տալ իւր անձը... բայց  
այնն էլ հօ գտնում եմ ես, թէև իմ  
գաածն այնպէս յարատե չէ:

Նա չէ ստում... բայց չէ՞ որ ես էլ  
չեմ ստում:

Նոյեմբեր, 1879 թ.



ՄԵՆՔ ԳԵՌ ԿԸՊԱՏԵՐԱԶՄԵՆՔ.



մքան չնչին, աննշան մի բան  
երբեմն կարողանում է  
բոլորովին վերաստեղծել  
մարդուն:

Խորին մտախոհութեան  
մէջ ընկած՝ մի անդամ անցնում էի ես  
մի մեծ ճանապարհով:

Ծանր նախադրացումներ ճնշում էին  
կուրծքս, վհառութիւնը պաշարել էր ինձ:

Ես դուխս վեր բարձրացրի... Իմ ա-  
ռաջ, կրկու շարք սօսիւների միջով հեռու,  
հեռու տարածվում էր ճանապարհը:

Եւ հէնց այդ ճանապարհի վրայ, մի  
տասը քայլ հեռու ինձանից, ճեղքուկների  
մի ամբողջ ընտանիք, ոսկու պէս պսպղա-

լով ամառուայ վառվառն արևի տակ,  
խմբով թռչկոտում էր և միջից կարում  
ճանապարհը, թռչկոտում էին ճանձղուկ-  
ներն ախորժալի, ինքնավաստահ և ծիծա-  
ղաշարժ կերպով :

Նրանցից մէկը մանաւանդ կողքերը շա-  
րունակ տափին տալով ու քարձիկն ուռ-  
ցնելով՝ յանդուզն կերպով ձկձկում էր,  
կարծես, արար-աշխարհն իրանը լինէր: Աշ-  
խարհիս տէր էր — պրծաւ, դնաց:


Այն ինչ վերեր, բարձր երկնքում սա-  
ւառնում էր ուրուրը, որին, շատ կարելի  
է, վիճակուած էր ճանկել ու խժռել հէնց  
նոյն այդ փոքրիկ աշխարհակալին:

Ես նայեցի, ծիծաղս եկաւ — և ինձ  
թափ տուի. ախուր մտածմունքներս իսկոյն  
չքայան: Ես էլ զգացի քաջութիւն, զգա-  
ցի անվեհերութիւն, սէր և եռանդ դէպի  
կեանքը:

Թող իմ գլխին էլ սաւառնէ իմ ու-  
րուրը. . .

— Աչի՛նչ... Մենք դեռ կրպատերազմենք:

Նոյեմբեր, 1879 թ.





**Ի**նչի համար էլ որ աղօթելիս լինի  
 մարդ—նա միշտ այն է խընդ-  
 բում, որ մի հրաշք կա-  
 տարուի:—Սակն մի աղօթքի  
 վերջնական միտքն այս է. «Օ, Մեծազոր  
 Տէր, այնպէս արա, որ երկու անգամ եր-  
 կու—չորս ջրլինի»։

Միայն այդպիսի աղօթքն է՝ իսկական ա-  
 ղօթքը, անձից առ անձն ուղղուած աղօթ-  
 քը: Աղօթել Տիեզերական Ողուն, Վերին  
 Էակին, Կանախ, Գեղէլի զառւած, անկեր-  
 պարան Աստուծուն — անկարելի է և ան-  
 հնարին:

Բայց մի՞թէ կարող է նոյն իսկ ինքը  
կենդանի, կերպարանաւորեալ Աստուածն  
այնպէս անել, որ երկու անգամ երկու—  
չորս չլինի:

Ամեն մի հաւատացող պարտական է  
պատասխանելու, որ կարող է—և պար-  
տական է նաև իրան համոզելու այդ բա-  
նում:

Բայց եթէ նրա բանականութիւնն ապրս-  
տամբօւի այդպիսի մի անմտութեան դէմ:

Այդանգ նրան օգնութեան կրհասնի  
Շեքսպիրը. «Շնտ բան կան աշխարհիս ե-  
րեսին, բարեկամ ճօրացիօ. . .» և այլն:

Բայց եթէ յանուն ճշմարտութեան ըս-  
կան նրան հակաձայնէլ—այն ժամանակ  
բաւական է, որ նա միայն կրկնէ այս նշա-  
նաւոր հարցը. «Ի՞նչ է ճշմարտութիւնը»:

Իէ որ այդպէս է՝ համ խմենք ու զու-  
արձանանք—համ էլ աղօթենք:

Յուլիս, 1881 թ.



ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ.



Տարակուսանքի օրերում, ծանր  
մտածումներով պաշա-  
րուած, հայրենիքիս վի-  
ճակի մասին խորհելիս  
— դու ես իմ միակ նե-  
ցուկն ու ապաւէնը, օ, մեծաբարբառ, հը-  
ղօր, արդարախօս և աղաա մայրենի լե-  
զու: Ի՞նչպէս կարող էի չըմհատել առանց  
քեզ, տեսնելով այն բոլորը, ինչ որ կա-  
տարվում է տանը: Բայց չէ կարելի չըհա-  
ւատալ, որ այդպիսի մի լեզու շնորհուած  
է մեծ և կարող ժողովրդին:

Յունիս, 1882 թ.





# Ց Ա Ն Կ

ԵՐԵՍ.

Գիւղ . . . . .	5
Խօսակցութիւն . . . . .	11
Պառաւ . . . . .	15
Շուն . . . . .	20
Ախոյեան . . . . .	22
Մուրացկան . . . . .	25
«Դու կըլսես դատաստանը յիմարի» . . . . .	27
Գոհ մարդ . . . . .	30
Կենցաղի կանոն . . . . .	32
Աշխարհի վերջը (Երազ) . . . . .	34
Մաշա . . . . .	39
Յիմար . . . . .	43
Արեւելեան լեզունդա . . . . .	47
Զորս տողանի երկու ոտանաւոր . . . . .	52
Ճնծողուկ . . . . .	59
Գանգեր . . . . .	62
Մշակ և փափկածեոն (խօսակցութիւն) . . . . .	64
Վարդ . . . . .	67
Իւ. Պ. Վրեմսկայեայի յիշատակին . . . . .	71
Վերջին տեսակցութիւն . . . . .	74
Այցելութիւն . . . . .	77
<i>Necessitas-Vis-Libertas</i> . . . . .	80
Ողորմութիւն . . . . .	82

Միջատ . . . . .	86
Շշի . . . . .	89
Կապուտակ աշխարհ . . . . .	92
Երկու հարուստ . . . . .	96
Ծերուկ . . . . .	98
Թղթակից . . . . .	100
Երկու եղբայր . . . . .	102
Եսասէր . . . . .	106
Խնջույք Վերին Էակի մօտ . . . . .	110
Սֆինքս . . . . .	112
Յաւէրժահարսներ . . . . .	115
Թշնամի և բարեկամ . . . . .	121
Քրիստոս . . . . .	124
Քար . . . . .	127
Աղանիներ . . . . .	129
Էզոնց, էզոնց . . . . .	133
Բնութիւն . . . . .	135
Կախեցէք նրան . . . . .	138
Ի՞նչ կըմտածեմ ես... . . . . .	143
«Ո՛րքան զեղեցիկ, ո՛րքան թարմ էին վար- դերը...» . . . . .	145
Ծովի վրայ . . . . .	149
Ն. Ն. . . . .	153
Կանգնիր . . . . .	155
Աբեղայ . . . . .	158
Մենք դեռ կըպատերազմենք . . . . .	160
Աղօթք . . . . .	162
Մայրենի լեզու . . . . .	164

